

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Ի՞նչ Ուղղութեամբ Կրնան Ջարգանալ Հայ-Ամերիկեան Յարաբերութիւնները՝ Թրամփի Օրօք

Հայկական քաղաքական շրջանակներու մօտ այս օրերուն ամենէն աւելի քննարկուող հարցը կը վերաբերի նախագահ Տանուտ Թրամփի Սպիտակ Տուն վերադարձին ու նոր վարչակազմի որդեգրելիք քաղաքականութեան՝ հարաւային Կովկասի նկատմամբ: Կան մտահոգութիւններ, որ նախագահ Թրամփ միջազգային գետնի վրայ պիտի վարէ մեկուսացումի քաղաքականութիւն մը, ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացնելով ներքին հարցերու վրայ, որոնց վերաբերեալ ան տուած է նախընտրական բազում խոստումներ, որոնք կը կարօտին իրագործման:

Նախագահ ԵՊ Պայտընի օրօք, Կովկասը դարձած էր Ամերիկայի ուշադրութեան կեդրոն ու Պետական Քարտուղարութիւնը մեծ ջանքեր կը գործադրէր Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան հասնելու համար: Պետական քարտուղար Էնթոնի Պլինքին անձնապէս հեռաձայնային մնայուն կապի մէջ էր Երեւանի ու Պաքուի հետ, որոնց ընթացքին ան յաճախ կը զգուշացնէր նախագահ Ալեյին՝ Հայաստանի դէմ ռազմական գործողութիւններ վերսկսելու ծանր հետեւանքներու մասին: Կարճ խօսքով Ամերիկան իր արտաքին քաղաքականութեան մէջ կարեւոր դարձուցած էր Հարաւային Կովկասը, ուր ան կը հետապնդէր նաեւ նպատակ՝ տկարացնել Ռուսաստանի ազդեցութիւնը, յատկապէս Ուքրաինայի պատերազմէն ետք: Այս ընթացքին է որ, զարգացաւ Հայ-Ամերիկեան ռազմական համագործակցութիւնը, խորհրդատուութեան եւ փորձի փոխանակման առումներով:

Ներկայիս գլխաւոր հարցականը այն է, թէ նոր վարչակազմը ինչպիսի՞ քաղաքականութիւն պիտի վարէ Հայաստանի նկատմամբ: Առաջին տարբերակը այն է թէ, Ամերիկան շարունակէ սերտ յարաբերութիւններ մշակել ու պահպանէ համագործակցութիւնը Երեւանի հետ: Նման քաղաքականութիւն մը նպաստաւոր է ու պիտի ամրապնդէ Հայաստանի դիրքերը Ատրպէյճանի հետ շարունակուող լարուածութեան լոյսին տակ: Պետական քարտուղարի պաշտօնին ծերակուտական Մարքո Ռուպիոյի նշանակումը դրական քայլ մըն է այս առումով: Ռուպիոն մօտէն ծանօթ

### Վարչապետ Փաշինեանը եւ Նախագահ Թրամփը Հեռախօսազրոյց Ունեցած ԵՆ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է ԱՄՆ նորընտիր նախագահ Տոնալտ Թրամփի հետ:

Ըստ Հայաստանի կառավարութեան՝ Փաշինեան շնորհաւորած է Թրամփը ընտրութիւններուն յաղթանակի առիթով եւ անոր տեղեկութիւններ փոխանցած է Հայաստան-ԱՄՆ յարաբերութիւններուն մէջ վերջին տարիներուն տեղի ունեցած զարգացումներուն եւ ընթացիկ վիճակին մասին, ինչպէս նաեւ քննարկուած են տարա-

ծաշրջանային օրակարգի հարցեր:

ԱՄՆ նախագահական ընտրութիւնները տեղի ունեցած են Նոյեմբեր 5-ին: Ընտրութիւններէն մէկ օր անց Փաշինեան շնորհաւորած էր Թրամփը՝ «տպաւորիչ յաղթանակի» առիթով՝ նշելով, որ անհամբեր կը սպասէ անոր հետ աշխատելուն՝ հայ-ամերիկեան ռազմավարական երկկողմ յարաբերութիւններ կառուցելու համար՝ հիմնուած ընդհանուր արժէքներու, առաջնահերթութիւններու եւ հետաքրքրութիւններու վրայ:

### Ամերիկացի Օրէնսդիրները Պաքուի Մէջ Յայտարարած ԵՆ Երեւանին Աջակցութեան Մասին



Ծերակուտականներ Էտ Մարքի (ձախին) եւ Շելտոն Ուայթհաուս Պաքուի մէջ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին

Պաքուի մէջ ընթացող COP29-ի շրջանակներուն մէջ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ ամերիկացի օրէնսդիրները՝ Դեմոկրատական կուսակցութիւնը ներկայացնող ծերակուտականներ Էտ Մարքին եւ Շելտոն Ուայթհաուսը, յայտարարած են Հայաստանին իրենց աջակցութեան մասին:

Ատրպէյճանցի լրագրողներէն մէկուն հարցումին՝ ինչո՞ւ ԱՄՆ եւ ԵՄ պատժամիջոցներ չեն սահմաներ Հայաստանի նկատմամբ, ծերակուտական Ուայթհաուս պատասխանած է. «Ես կ'աջակցիմ

Հայաստանին: Չեմ ուզեր կանգ առնել հիւրընկալող երկրի (Ատրպէյճանի) մարդու իրաւունքներու հարցերուն վրայ, բայց եթէ ատիկա թեմա դառնար, ապա ես նոյնքան փոխլրացնող չէի ըլլար»:

Ասուլիսի միւս բանախօս ծերակուտական Էտ Մարքին իր հերթին պնդած է՝ ատրպէյճանցի քաղաքական բանտարկեալները, ռազմագերիները պէտք է ազատ արձակուին, Լեւոնային Ղարաբաղի հայերը պէտք է վերադարձի իրա-

### Ձիւ Լոեցնելու Փորձերը Միայն Կ'ամրապնդեն Իմ Վճռականութիւնս. Ֆրենք Փալոն



ԱՄՆ գոնկրեսական Ֆրենք Փալոն

ԱՄՆ գոնկրեսական Ֆրենք Փալոն, որը Պաքուի մէջ կը մասնակցէր ՄԱԿ-ի կլիմայի փոփոխութեան COP-29 գագաթաժողովին, բախած է Ատրպէյճանի կառավարութեան հովանաւորած բողոքի հաւաքներուն:

Ֆրենք Փալոնի պաշտօնական կայքին մէջ այս մասին հաղորդագրութիւն հրատարակուած է:

Կը նշուի, որ բողոքի հաւաքներուն մասնակիցները հետապնդած են Փալոնը թէ՛ գագաթաժողովի ընթացքին, թէ՛ հիւրանոցին մէջ: Գոնկրեսականը խուսափած է ֆիզիքական վնասներէն միայն ԱՄՆ Պետական Քարտուղարութեան միջամտութեան շնորհիւ:

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ արգիլած է Փալոնին մասնակցիլ իր եւ ԱՄՆ Գոնկրեսի անդամներու հանդիպման: Չնայած Փալոն հանդիպում խնդրած էր Ներկայացուցիչներու պալատի պատուիրակութեան անունով՝ զինք յատուկ ցուցակէն հեռացուցած են:

Կը նշուի, որ Փալոն հետեւողականօրէն հանդէս կու գայ տարածաշրջանին մէջ խաղաղութեան օգտին եւ կը դատապարտէ Ատրպէյճանի ռազմական յարձակումը եւ հայերու ցեղային զտումները Լեւոնային Ղարաբաղի մէջ:

«Վրդովեցնող եւ շատ խօսուն է, որ նախագահ Ալիեւ կը փորձէ լուծել ԱՄՆ Գոնկրեսի անդամները եւ խոչընդոտել հայ ժողովուրդին համար մարդու իրաւունքներու եւ արդարութեան վերաբերեալ քննադատական քննարկումները նոյնիսկ փակ դռներու ետին: Ձիւ լուեցնելու փորձերը միայն կ'ամրապնդեն վճռականութիւնս՝ պայքարելու հաշուետուողականութեան, բարեփոխումներու եւ անոնց արժանապատուութեան համար, որոնք տուած են Ատրպէյճանի ճնշող վարչակարգին պատճառով: «Ես պիտի շարունակեմ պայ-

# ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Փորձագետները Տպաւորուած Են Տաւուշի Մարզի Սահմանագատուած Գօտի Այցէն

ՀՀ Անվտանգութեան Խորհուրդը՝ ԱԽ քարտուղար Արմէն Գրիգորեանի գլխաւորութեամբ, փորձագէտներու եւ քաղաքագէտներու մասնակցութեամբ այց կազմակերպած էր Տաւուշի մարզի սահմանագատուած գօտի: Իր տպաւորութիւններով Civic.am-ի հետ զրոյցին հետ կիսուած է այցին մասնակցած քաղաքագէտ Դաւիթ Ստեփանեանը:

«Ես շատ տպաւորուած եմ արդէն իսկ կատարուած եւ կատարուող աշխատանքներով սահմանամերձ գօտում, այսինքն՝ արդէն սահմանագատուած եւ սահմանագծուած գօտում: Խօսքը ե՛լ ամրաշինական աշխատանքների, ե՛լ պաշտպանական կառուցների մասին է: Շատ բան ի հարկէ չենք կարող ասել, բայց 2020 թուականից սկսած՝ ես բազմիցս եմ անդրադարձել այս խնդրին եւ նշել եմ, որ մեզ, այո՛, հարկաւոր են պեթոնապատ ամրաշինական կառուցներ սահմանի վրայ, որոնք թոյլ կը տան թշնամու յարձակման դէպքում խնայել մեր զինուորները, մեր տղաների կեանքերը: Եւ ես ուրախութեամբ տեսնում եմ, որ այդ աշխատանքը վերջապէս արւում է: Շատ դրական զգացումներով եմ եկել», - ըսաւ քաղաքագէտը:

Ան տեղեկացուց, որ Նոյեմբերեան գացող ճանապարհին, ուր ժամանակին վարորդներուն կը յորդորէին արագ անցնել, իսկ գիշերով՝ ինքնաշարժին լոյսերը անջատած, իսկ այդ հատուածին մէջ ճանապարհը պարզապէս դարձած է անվտանգ. ասֆալթապատած են, թարմացուցած, ինչ որ աւելի շատ հոգեբանական նշանակութիւն ունի, որ մարդիկ իրենց աւելի պաշտպանուած զգան, բայց իրականութեան մէջ այն ճանապարհը, որ այսօր կայ, որ կը կապէ Հայաստանը Վրաստանի հետ, շատ աւելի անվտանգ է, շատ աւելի լաւ կահաւորուած եւ շատ աւելի դուրեկան է, քան այն, ինչ մենք ունեցած ենք մինչեւ սահմանագատում եւ սահմանագծում:

Պատասխանելով հարցումին, թէ այս պարագային ինչո՞ւ կ'աղմկէր ընդդիմութիւնը, քաղաքագէտը ըսաւ, որ մինչեւ իր աչքով սահմանագատուած սահմանը տեսնելը ըսած էր, թէ ինչու անոնք կ'աղմկեն:

Դաւիթ Ստեփանեանի խօսքով՝ անոնք կ'աղմկեն այն պարզ պատճառով, որ փորձած են օգտագործել այդ սահմանագատման փաստը, այն, որ փաստացի Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ Տաւուշի սահմանագատուած հատուածին մէջ տեղի ունեցած է տարածքներու փոխանակում, անոնք փորձած են ատիկա օգտագործել, որպէսզի Հայաստանին մէջ յառաջացնեն հաւաքական դժգոհութիւն եւ հասնին իրենց բաղձալի նպատակին, որ չէ փոխուած վերջին 30 տարուայ ընթացքին, իսկ նպատակը մէկն է՝ իշխանափոխութիւն:

Խօսելով նաեւ Անվտանգութեան Խորհուրդին կատարած աշխատանքին մասին՝ քաղաքագէտը ըսաւ, որ ԱԽ-ն շատ մեծ աշխատանք կը տանի հասարակութեան եւ իշխանութեան միջեւ կապ ստեղծելու ուղղութեամբ:

«Ես կարծում եմ, որ դա շատ կարեւոր է, որովհետեւ բարձրացնում է վստահութիւնը հասարակութեան նկատմամբ, հասարակութեան կողմից դէպի իշխանութիւն:



Հիմա, տուեալ դէպքում, ես որպէս հասարակութեան ներկայացուցիչ եմ խօսում, ես ո՛չ կուսակցական եմ, ո՛չ իշխանութեան ներկայացուցիչ եմ, ոչ էլ՝ ընդդիմադիր: Ես կարծում եմ՝ ԱԽ-ն շատ ճիշդ ուղղութեան վրայ է: Սա առաջին միջոցառումը չէ, եւ ես կ'ուզէի շնորհակալութիւն յայտնել ԱԽ-ին եւ անձամբ Արմէն Գրիգորեանին ճիշդ ընկալման եւ ճիշդ շարժումը դնելու համար, որովհետեւ մեր երկրում այսօր, երբ որ մեր հասարակութիւնը գերպառակտուած է, այսպիսի աշխատանքը շատ կարեւոր է, սա ուղղակի առաջին քարերից մէկն է: Կարծում եմ, որ այս աշխատանքը պէտք է շարունակել, միւս գերատեսչութիւնները պէտք է միանան, որպէսզի գնալով, քայլ առ քայլ հասարակութեան եւ իշխանութեան միջեւ փոխվստահութիւնը աճի. որովհետեւ իշխանութիւնն էլ մեզ է վստահում, երբ որ տանում է եւ ցոյց է տալիս պաշտպանական կառուցներ, որոնք ամէն մէկը չպէտք է տեսնի», - եզրափակեց Դաւիթ Ստեփանեանը:

Մենք զրուցած ենք նաեւ «Յանուն Հանրապետութեան» կուսակցութեան արտաքին գործերու քարտուղար Առնոլտ Բլէեանի հետ: Ան նշեց, որ իրականութեան մէջ շատ հաճելի էր, ու ինք ի սկզբանէ կողմնակից էր, որ տեղի կ'ունենայ սահմանագատում եւ սահմանագծում, բայց այնուամենայնիւ կային որոշ անհանգստութիւններ, որոնց մասին ինք կը բարձրաձայնէր:

### Ֆրանսա Ոչինչ Կը Մոռնայ Եւ Ոչինչ Կը Զիջի. Դեսպան Տըքոթինյի

Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Օլիվիէ Տըքոթինյի անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի հայերու՝ իրենց տները վերադառնալու իրաւունքին՝ չիշեցնելով անոր վերաբերեալ Արդարադատութեան միջազգային դատարանը ամրագրեց Լեռնային Ղարաբաղը հարկադրուած լքած հայերու՝ իրենց տուները վերադառնալու իրաւունքը: Մէկ տարի անց, Ատրպէյճանին ուղղուած այս հրամանը կը մնայ անկատար: Ֆրանսա ոչինչ կը մոռնայ եւ ոչինչ կը զիջի՝ ոչ անոնց վերադարձի իրաւունքի, ոչ ալ մշակութային

«Այս այցը շատ կարեւոր էր, դրա համար ես շնորհակալ եմ ԱԽ քարտուղարին, որ հրաւիրեցին մի խումբ փորձագէտներ, որոնք այսինքն մասնագէտներ, ՔՀԿ-ի եւ քաղաքական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ, նաեւ որոշ լրագրողներ: Մենք եղանք Բաղանիսում, Ոսկեպարում: Ի դէպ, տեսանք Ոսկեպարի այն եկեղեցին, որ աղաղակում էին, թէ պիտի մնայ Ատրպէյճանի կազմում, եկեղեցին վերանորոգուած է: Մենք նաեւ Կիրանցում եղանք, Կիրանցի դպրոցը տեսանք, այնտեղ կայ 32 աշակերտ, որոնց հետ նոյնպէս հանդիպեցինք, զրուցեցինք», - ըսաւ Առնոլտ Բլէեանը:

Մեր զրուցակիցը նշեց, որ կը յիշէ այն բողոքողները, որոնք դէմ էին, որ Հայաստանը ունենայ պետական սահման, որոնք կը պնդէին, թէ ոեւէ ծնող թոյլ չի տար, որ իր երեխան յաճախէ այդ դպրոցը, բայց եղաւ այն, ինչ եղաւ:

«Կայ մի բան, որի մասին կ'ուզեմ խօսել: Կայ փոխհամաձայնութիւն հայերի եւ ատրպէյճանցիների միջեւ, որ այդ սահմանագատուած հատուածի տարածքում սահմանապահները չեն կրում սաղաւարտ, չեն կրում զրահաբաճկոն, եւ այստեղ լարուածութիւնն ու վտանգն աւելի նուազ են, քան այն սահմաններում, որտեղ չկայ սահմանագատուած եւ սահմանագծուած սահման: Դա նաեւ որպէս լաւելում այն պնդմանը, որն արւում էր

առաջ մեր կողմից, որ մի բան է, երբ սահմանապահներն են հսկում սահմանը, այլ բան է, երբ արդէն զինուորներն են հսկում սահմանը, որոնք զինուած են, եւ իրենց տրամադրուածութիւնն է լրիւ այլ, քան սահմանապահներինը: Այդ առումով շատ լաւ կը լինէր, որպէսզի հնարաւորինս շուտ տեսնէինք շարունակութիւնը: Որովհետեւ, այոյ, Կիրանցի, Ոսկեպարի, Բաղանիսի բնակիչներն իրենց աւելի անվտանգ են զգում, քանի որ կայ յստակ սահման, եւ այնտեղ չկան ատրպէյճանցի զինուորներ, ովքեր փորձում են վիճարկել քո տարածքը եւ փորձում են ներխուժել քո տարածք: Այնտեղ մարդիկ իրենց շատ աւելի անվտանգ են զգում, քան զգում էին առաջ», - ըսաւ Առնոլտ Բլէեանը:

Ի յաւելում ան նշեց, որ «այցի ընթացքում տեսան, որ Ոսկեպարի եկեղեցին տեղում է, Կիրանցի դպրոցը տեղում է, կային շինութիւններ, երեքուկէս շինութեան մասին է խօսքը, որոնք անցան սահմանից այն կողմ, բայց այնուամենայնիւ գործընթացը կատարուած է, գործընթացը շատ դրական է ազդել, եւ այդ գործընթացի շնորհիւ մենք արդէն միջպետական համաձայնութիւն ունենք Ատրպէյճանի հետ, որ գործընթացը պէտք է շարունակուի արդէն յստակ նախագահների մակարդակով ստորագրուած կանոնակարգի հիման վրայ»:



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ԱՌՅԻԱԼ ԴԵՍՊԱՆՈՒՍ ՅՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
 ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$75.00, \$150.00 (First Class)  
 Canada \$ 250.00 (Air Mail)  
 Overseas \$400.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Օլիվիէ Տըքոթինյի  
 եւ կրօնական ժառանգութեան պաշտպանութեան հարցով», - գրած է Տըքոթինյի:

# ԼՈՒՐԵՐ

## Բարձրաստիճան Պաշտօնեաներ Զրաժարական Ներկայացուցած Են

ՀՀ Բարձրագույն Դատական Խորհուրդի (ԲԴԽ) նախագահ Կարեն Անդրեասեան, Հակափտածութեան Կոմիտէի նախագահ Սասուն Խաչատրեան, տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարար Գնէլ Սանոսեան, ներքին գործերու նախարար Վահէ Ղազարեան, Քննչական Կոմիտէի նախագահ Արզիշտի Քյարամեան, Պետական Եկամուտներու Կոմիտէի (ՊԵԿ) նախագահ Ռուստամ Բաղասեան կը լքեն պաշտօնները:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան աւելի վաղ հաստատած էր տեղեկութիւնները, որ շարք մը բարձրաստիճան պաշտօնեաներէ խնդրած է թողել իրենց պաշտօնները, նշելով որ պատճառները անձնաւորուած չեն, այլ համակարգային, որոնց մասին հրապարակային խօսած է: Գործադիր ղեկավարը պաշտօնեաներու անուններ յայտարարութեան մէջ չէր նշած:

Օրեր առաջ կառավարութեան նիստին Փաշինեան խիստ եւ կտրուկ դժգոհութիւն յայտնած էր իրաւապահ համակարգէն, շեշտելով որ դատական եւ ուժային կառույցներուն մէջ բարեփոխումներու արդիւնքները չի տեսներ, իսկ իր համբերութեան բաժակը լեցուած է:

Մէկ ամիս առաջ Քննչական Կոմիտէի 10-ամեակին առթիւ շնորհաւորելով կառույցը, Փաշինեան յայտնած էր՝ «արդարութիւն հաստատելու օրակարգն այսօր նոյնքան հրատապ է, որքան հրատապ

էր 2018 թուականին կամ 2019 թուականին: Բայց սա չի նշանակում, թէ մենք արդարութեան հաստատման ուղղութեամբ ոչինչ չենք արել»:

Անցեալ շաբաթ՝ 2025 պիւտոճէի քննարկման ընթացքին վարչապետը յայտնած էր, թէ Հայաստանի Հարկային օրէնսգիրքը ապապետական է:

«Մենք պէտք է ունենանք նոր Հարկային օրէնսգիրք, որը համապատասխանում է Հայաստանի պետական շահերին», - ըսած էր Փաշինեան:

Նոյեմբեր 11-ին Հայաստանի մէջ տեղական ինքնակառավարման համակարգի 28-ամեակին նուիրուած միջոցառման ընթացքին Փաշինեան արձանագրած էր՝ տեղական ինքնակառավարման համակարգը կայացած է, բայց դեռ շատ ընելիքներ կան:

Փաշինեան նախ գոհունակութիւն յայտնած էր այն վճռակառուցութեան համար, որ ցուցաբերուած է եւ կը ցուցաբերուի տեղական ինքնակառավարման ոլորտին մէջ բարեփոխումներ իրականացնելու համար, միեւնոյն ժամանակ արձանագրած, որ Հայաստանի մէջ խոշորացման շատ մասշտաբային բարեփոխումներ տեղի ունեցած են, բայց այստեղ ալ ոչ-բոլոր հարցերուն պատասխանները տրուած են:

Գործադիր ղեկավարը նաեւ շեշտած էր՝ շատ մեծ ճեղք կայ քաղաքացիին, պետութեան եւ համայնքին միջեւ:

## Դատարանը Որոշած Է Յաջորդ Նիստին Բերման Ենթարկել Քոչարեանը, Օհանեանը Եւ Խաչատուրովը

Հակափտածութեան դատարանին մէջ կը շարունակուի «Մարտի 1»-ի գործով նիստը:

Այս գործով անցնող Ռոպերթ Քոչարեանը եւ անոր նախկին ենթակաները՝ Սէյրան Օհանեանը, Եուրի Խաչատուրովը, դատարան չեն ներկայացած:

Քոչարեանի, Օհանեանի, Խաչատուրովի փաստաբանները յայտնած են, թէ իրենց նախկին պաշտպանները մեղադրելի կարգավիճակ չունին, հետեւաբար պարտաւոր չեն ներկայանալու դատարան, եւ հարկադրաբար ներկայացնելը իրաւաչափ չէ:

Դատարանը որոշեց Սէյրան Օհանեանը, Եուրի Խաչատուրովը եւ Ռոպերթ Քոչարեանը բերման ենթարկել՝ միւս նիստին անոնց մասնակցութիւնը ապահովելու նպատակով:

Վճռաբեկ դատարանը Սեպտեմբեր 12-ին որոշմամբ բեկանած է Ռոպերթ Քոչարեանի, Եուրի Խաչատուրովի եւ միւսներուն գործը կարճելու որոշումը ու գործը ուղարկած է Հակափտածութեան քրէական դատարան՝ նոր քննութեան:

2008 թուականի Մարտ 1-էն 2 ինկած ժամանակահատուածին Երեւան քաղաքին մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն վերաբերեալ ՀՀ յատուկ քննչական ծառայութեան մէջ քննուող քրէական գործով վարույթը իրականացնող մարմինը համարած է, որ գործով ճեղք բերուած ապացոյցները բաւարար են Հայաստանի Հանրապետութեան պաշտօնաթող նախագահ Ռոպերթ Քոչարեանի, ՀՀ Ձինուած

ուժերի Գլխաւոր շտաբի պետի պաշտօնը զբաղեցուցած Սէյրան Օհանեանի, ՀՀ պաշտպանութեան նախարարի տեղակալի պաշտօնը զբաղեցուցած Եուրի Խաչատուրովի եւ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտօնը զբաղեցուցած Արմէն Գէորգեանի վերաբերեալ մեղադրական եզրակացութիւն կազմելու եւ գործը դատարան ուղարկելու համար:

Սոյն գործի շրջանակին մէջ Ռոպերթ Քոչարեան կը մեղադրուէր ՀՀ նախկին Քրէական օրէնսգիրքի 300.1-րդ յօդուածի 1-ին մասով եւ 311-րդ յօդուածի 4-րդ մասի 2-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելու եւ առանձնապէս մեծ չափերով կաշառք ստանալու համար:

Սէյրան Օհանեան կը մեղադրուէր ՀՀ նախկին Քրէական օրէնսգիրքի 300.1-րդ յօդուածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելու համար:

Եուրի Խաչատուրով կը մեղադրուէր ՀՀ նախկին Քրէական օրէնսգիրքի 300.1-րդ յօդուածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելու համար:

Արմէն Գէորգեան կը մեղադրուէր ՀՀ նախկին Քրէական օրէնսգիրքի 38-300.1-րդ յօդուածի 1-ին մասով, 311-րդ յօդուածի 4-րդ մասի 2-րդ կէտով եւ 190-րդ յօդուածի 3-րդ մասի 1-ին կէտով՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելուն օժանդակելու, առանձնապէս մեծ չափերով կաշառք ստանալու եւ յանցաւոր ճանապարհով ստացուած գոյքը օրինականացնելու համար:

## Կան Շրջանակներ, Որոնք Կը Մտածեն Իշխանութիւնները Սպանելու Մասին, Պէտք Է Պաշտպանել Իրանհետեւ

Ազգային Ժողովին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան 2025 թուականի պետական պիւտոճէի նախագիծի քննարկման ժամանակ անդրադարձաւ ՊՊԾ-ի վերաբերեալ ընդդիմութեան քննադատութիւններուն:

Այդ առումով ան նկատեց, որ ընդդիմադիրները դժգոհ են, որովհետեւ «ՊՊԾ-ի աշխատանքի շնորհիւ իրենք չեն կարողացել ներկաներից՝ իշխանութեան ներկայացուցիչներէն ունէ մէկին սպաննել»:

«Իրազեկ քաղաքացիների միաւորում» հասարակական կազմակերպութեան ծրագրերու համակարգող Դանիէլ Իրանիսեան «Հայկական ժամանակ»-ի հետ զրոյցին ըսած է, թէ այն, որ ՊՊԾ-ն ունի ինդիւստրիա, եւ պէտք է վերանայ իր պահուածքը Ազգային Ժողովին մէջ, այդպէս է, սակայն Քոչարեանը եւ անոր խումբը պէտք է լռեն առհասարակ:

«Որովհետեւ իրենց ժամանակ ՊՊԾ-ն աւելի վատն էր, եւ կարող էմ ՊՊԾ-ին քննադատել, իրենք չեն կարող: Ռոպերթ Քոչարեանը այն նախագահը չէ», որի անվտանգութեան հսկողը 20 տարի առաջ զուգարանում մէկին սպաննեց՝ «փրկվեթ Ռոպ» արտայայտութեան համար, ինչի մասն են խօսում», - յիշեցուցած է ան:

Ջրուցակիցը կը կարծէ՝ միարժէք է, որ կրնան յարձակիլ պետական պաշտօնեաներու վրայ, ընդհուպ փորձեն սպաննել զանոնք:

«Ներողութիւն, 4 տարի առաջ ԱԺ նախագահին ծեծել էին այն աստիճանի, որ վստահ էին՝ մահացած է: Իմ գնահատմամբ՝ դա եղել է մահափորձ: Բոլորովին վերջերս ԱԱԾ-ն ձեռքարկել է մի խմբի, որը ՌԴ-ում վերանայտարաստուել է՝ այստեղ սաղարաններ իրականացնելու համար: Սա, ցաւօք, երեւակայական արուեստի ժանրից է, եւ, այո՛, ինձ էլ է տհաճ տեսնել, որ երբ վարչապետը Ա կէտից Բ կէտ է գնում, դրա համար փողոցներ են փակուում, մեծ միջոցներ են ներգրաւում եւ իմ վճարած հարկերից շատ մեծ գումարներ ծախսում, սակայն եթէ ինչ-որ խմբերի մտքով անցնում է, որ պէտք է ՀՀ իշխանութիւններին ուժով ինչ-որ բան պարտադրի, ապա, այո՛, իշխանութիւնը պէտք է ֆիզիքապէս պաշտպանուի, եւ մենք՝ հասարակութիւնը, իր իսկ ընտրած իշխանութեանը պէտք է պաշտպանենք այդ թուում նաեւ հարկերի ծախսերի միջոցով: Ես չեմ թողնելու, որ իմ



«Իրազեկ քաղաքացիների միաւորումի» ծրագրերու համակարգող Դանիէլ Իրանիսեան

երկրում հանրութեան ընտրած վարչապետին ինչ-որ մէկը փորձի սպաննել», - ըսած է Իրանիսեան:

Ան կը յիշեցնէ, որ ընդդիմադիր աքթիվիստներ կային, որոնք փորձած էին պայթեցնել որոշ ՔՊ-ական պատգամաւորներու գրասենեակներ, ու պէտք է զարմանալ անկէ, որ անվտանգութիւնը կ'ուժեղացուի: «Ես չեմ ուզում տպաւորութիւն ստեղծուի, որ բոլոր ընդդիմադիրները փորձում են իշխանութեան ներկայացուցիչներին սպաննել, բայց, այո՛, կան որոշ շրջանակներ, որոնք դրա մասին մտածում են ու բարձրաձայնում»:

Դանիէլ Իրանիսեան նաեւ կը նկատէ, որ իրաւապահ մարմիններու նկատմամբ ատելութեան յառաջացումը որեւէ լաւ տեղ պիտի չտանի:

«Քննադատութիւնն էլ ոստիկանութեան եւ ՊՊԾ աշխատակիցների վերաբերեալ պէտք է լինի ճշգրիտ եւ թիրախային եւ չվերածուի համակարգի նկատմամբ ատելութեան յառաջացման: ՊՊԾ-ն պէտք է լինի ու իր գործն անի, ու եթէ մենք ուզում ենք, որ ՊՊԾ-ում ծառայեն լաւ անձեր, ապա պէտք է իրենց մեր վճարած հարկերից բարձր աշխատավարձ տանք: Այո՛, ինձ համար, որպէս քաղաքացու, իմ վճարած հարկերը արժէքաւոր են, բայց ես, որպէս քաղաքացի, չեմ ուզում, որ իմ եւ հասարակութեան ընտրած Ազգային Ժողովի նախագահին սպաննեն», - եզրափակած է ան:

## ԵԱՏՄ-Իրան Առեւտրաշրջանառութեան 14 Տոկոսը Կ'իրականացնէ Հայաստանը

Ազգային Ժողովին մէջ, ՀՀ տնտեսութեան նախարար Գէորգ Պապոյեան ներկայացուց ԵԱՏՄ-ի եւ Իրանի միջեւ ազատ առեւտրի մասին նոր համաձայնագիրը վաւերացնելու մասին օրէնքի նախագիծը: «Նախարարը նշեց, որ այս համաձայնագիրը հիմնուած է 2019 թուականին ուժի մէջ մտած ժամանակաւոր համաձայնագրի դրոյթներուն վրայ, որով արդէն իսկ հնարաւոր դարձած է մեծցնել առեւտրաշրջանառութեան ծաւալները:

«Իրանը Միջին Արեւելքի ամենամեծ տնտեսութիւնն է, ինչպէս նաեւ Մերձաւոր Արեւելքի եւ Հարաւային Ասիայի երկրների հարաւային առեւտրային ուղու

առանցքային երկիրն է եւ հանդէս է գալիս որպէս առեւտրային կապերի հետագայ զարգացման հեռանկարային ուղղութիւն ինչպէս Հայաստանի, այնպէս էլ ԵԱՏՄ երկրների համար: Հարկ է նշել, որ 2019 թուականին ուժի մէջ մտած ժամանակաւոր համաձայնագիրը թոյլ է տուել շեշտակիօրէն աւելացնել ԵԱՏՄ պետութիւնների եւ Իրանի առեւտրաշրջանառութիւնը՝ 2,4 միլիարդ տոլարից հասցնելով 5,2 միլիարդ տոլարի: Նշեմ, որ Իրանի հետ առեւտրաշրջանառութեան այս 5,2 միլիարդի մօտ 14 տոկոսը Հայաստանն է իրականացնում, ինչը շատ մեծ թիւ է», - ըսաւ Պապոյեան:

# ԼՈՒՐԵՐ

## Հայաստանի Ռազմականացումը Պաքուին Ստիպած Է Մեծցնել Ռազմական ՊիտոճԷն. Ատրպեյճանցի Նախարար

Հայաստանի ռազմականացումը Պաքուին ստիպած է մեծցնել ռազմական պիտոճԷն, յայտնած է Ատրպեյճանի ելեմնտքի նախարար Սամիր Շարիֆովը՝ ելույթ ունենալով Միլլի Մեճլիսի տնտեսական քաղաքականություն, արդիականություններ և ձեռնարկներ լիցենզիայի մեջ:

Շարիֆովի խօսքով՝ Ատրպեյճանի յաջորդ տարուհի պիտոճԷնով պաշտանական ծախսերուն յատկացուած է մօտ 5 միլիար տոլար:

Երեւան հաղորդած է, որ Հայաստանի ռազմական պիտոճԷն յաջորդ տարի պիտի մեծնայ մօտ 20 տոկոսով: Փորձագէտները «Հայաստանի պատմութեան համար սանահաղէպ համարած են:

Հայաստանի ռազմականացման դէմ դժգոհող Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիև Սեպտեմբերի վերջը յայտնեց, որ Ատրպեյճան կ'ընդլայնէ իր ռազմատեխնիկական հարաւորութիւնները, ռազմական արդիւնաբերութեան ոլորտին մէջ նոր համագործակցու-



Ատրպեյճանի Ելեմնտքի նախարար Սամիր Շարիֆով

թիւններ կը հաստատէ բազմաթիւ երկիրներու հետ, շեշտելով որ երկրի պաշտպանունակութեան ամրապնդումը առաջնահերթութիւն է: Հայաստան, իր հերթին, մէկ անգամ չէ յայտարարած, որ «մարտունակ բանակ ունենալը իր ինքնիշխան իրաւունքն է»:

## «Ատրպեյճանի Յարձակման Հետեւանքով Հայերը Ծայրայեղ Դժուարութիւններու Կը Բախին».



Յայտնի բնապահպան, աքթիվիսթ Կրեթա Թունպերկ Երեւանի մէջ

Վրաստանի մէջ բողոքի հաւաքներ կատարելէ յետոյ Հայաստան ժամանած յայտնի բնապահպան, աքթիվիստ Կրեթա Թունպերկ Երեւանի մէջ մասնակցած է «Ատրպեյճանի յարձակման ազդեցութիւնը մարդու իրաւունքներու եւ շրջակայ միջավայրի պաշտպանութեան վրայ» թեմայով համաժողովին:

Իր ելույթին մէջ Թունպերկ Ատրպեյճանը մեղադրեց ցեղային գտումներու համար՝ շեշտելով, որ Ատրպեյճանի ռազմական յարձակման հետեւանքով հայերը ծայրայեղ դժուարութիւններու կը բախին:

«Այդ տանջանքները, ճնշումները արդարացում չունին, իսկ աշխարհը լուռ է», - յայտնեց բնապահպանը:

Թունպերկ Հայաստան ժամանելով յայտնած է, որ կը պոչքթի

Պաքուի մէջ տեղի ունեցող COP29-ը: Ան թիֆլիսի մէջ բողոքի հաւաքի ժամանակ բարձրացուցած է ոչ միայն կլիմայական փոփոխութեան առնչուող հարցեր, այլեւ խօսած է Ատրպեյճանի մէջ մարդու իրաւունքներու խախտումներու, Լեռնային Ղարաբաղի մէջ հայերու ցեղային գտումներու մասին:

«Բացարձակապէս անընդունելի է, որ կլիմայի վերաբերեալ համաժողովը կը հիւրընկալէ Ատրպեյճանը. երկիր, որ շարունակաբար կը ճնշէ քաղաքացիական հասարակութեան, բռնաճնշումներու կ'ենթարկէ իր բնակչութիւնը եւ յատկապէս անոնք, որոնք կը փորձեն պաշտպանել մարդու տարրական իրաւունքները: Երկիր մը, որ ցեղային գտումներ կ'իրականացնէ հայերու դէմ», - ըսած է աքթիվիստը:

## Ամերիկացի Օրէնսդիրները Պաքուի Մէջ

Շարունակուած էջ 1-էն

ուռնք ունենան, Ատրպեյճանն ու Հայաստանը պիտի խաղաղութեան համաձայնագիր կնքեն:

«Ինչպէս Շելտոնը ըսաւ, գիտէք,

մենք, ի վերջոյ, պէտք է համոզուինք, որ ռազմագերիները ազատ կ'արձակուին, եւ որ հայ ժողովուրդը իրաւունք ունի խաղաղ վերադառնալու Լեռնային Ղարաբաղ», - ըսած է ծերակուտական Մարքին:

## Նիկոլ Փաշինեան Հանդիպած Է Հռոմի Պապին Հետ



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպումը է Հռոմի Ֆրանչիսկոս պապին հետ

Վատիկան գտնուող վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդիպած է Հռոմի Ֆրանչիսկոս պապին հետ եւ տեղեկացուցած է Հայաստան-Ատրպեյճան խաղաղութեան գործընթացի վերջին զարգացումներուն մասին եւ վերահաստատած է Հայաստանի կառավարութեան հաւատարմութիւնը խաղաղութեան օրակարգին:

Վարչապետի աշխատակազմին փոխանցմամբ՝ Նիկոլ Փաշինեան ընդգծած է, որ Հայաստան չունի խաղաղութեան իր բաժին ներդրումը ունենալու հարցով վճռական է եւ շնորհակալութիւն յայտնած է

հայ գերիները ազատ արձակելու Սուրբ Աթոռին շարունակական ջանքերուն համար:

Վարչապետը ընդգծած է նաեւ Հայաստանի լիակատար աջակցութիւնը Սուրբ Աթոռին՝ միջազգային հարթակներու վրայ խաղաղութեան օրակարգի սպասարկման եւ այս ուղղութեամբ համատեղ հանդէս գալու եւ գործելու հարցով:

Նիկոլ Փաշինեան յաւելած է, որ Հայաստանի մէջ հաստատուած Առաքելական նուիրակի նշանակումը զգալի յառաջընթաց պիտի ըլլայ բարեկամական յարաբերութիւններուն մէջ:

## Զախարովա Յայտնած Է, Որ Իրենք Պատրաստ Են Զարգացնելու Կովկասը

Ռուսաստանի Արտաքին գործերու նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա կրկին անդրադարձած է Հարաւային Կովկասի իրադրութեան եւ բարձր գնահատած է 2021 թուականի Յունուարին Մոսկուայի մէջ կայացած Փութին-Ալիեւ-Փաշինեան եռակողմ հանդիպումը:

«Մենք, ի տարբերութիւն արեւմտականներուն, շահագրգռուած ենք անվտանգ, կայուն Հարաւային Կովկասով: Մենք այնտեղ ներկայ ենք, այնտեղ մեր շահերն են, մենք պատրաստ ենք զարգացնելու այդ տարածաշրջանը: Ռուսաստանը պատրաստ է շարունակելու համակողմանի աջակցութիւն ցուցաբերել հայ եւ ատրպեյճանցի գործընկերներուն՝ կայուն խաղաղութեան հասնելու համար», - ամենաշաբաթեայ ճեպագրոյցի ժամանակ ըսած է Զախարովա:

Ան բարձր գնահատած է Ռուսաստանի եւ անձամբ ՌԴ նախագահին գործադրած զգալի ջանքերը՝ պայմանաւորուածութիւններ ձեռք բերելու համար, «որոնք կանգնեցուցած են արիւնալի պատերազմը»:

«Ընդամենը երկու ամիս անց՝ 2021 թուականի Յունուարին, Մոսկուայի մէջ, Ռուսաստանի նախագահին առաջարկով, տեղի ունեցաւ զգալի խաղաղութիւն, նաեւ Հայաստանի եւ Ատրպեյճանի ղեկավարներու մասնակցութեամբ, ուր տրուեցաւ

խաղաղ գործընթացի մեկնարկը: Հարաւային Կովկասի մէջ տարածաշրջանային հաղորդակցութիւններու ապաշրջափակման հարցով Հայաստանի, Ատրպեյճանի եւ Ռուսաստանի փոխվարչապետներու համանախագահութեամբ ստեղծուեցաւ եռակողմ աշխատանքային խումբ, իսկ հետագային 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութեան հիման վրայ ձեւաւորուեցաւ եռակողմ պայմանաւորուածութիւններու ամբողջ համալիրը, որոշուեցան հայ-ատրպեյճանական կարգաւորման հիմնական ուղղութիւնները», - յայտնած է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը:

Զախարովա ընդգծած է, որ կարելի եղած էր իրական լուրջ արդիւնքներու հասնիլ շաբաթ մը հարցերու շուրջ, օրինակ՝ 2023 թուականի Յունիսին եռակողմ աշխատանքային խումբի շրջանակին մէջ մենք մօտ էինք տարածաշրջանին մէջ ձանապարհային ուղիներու գործնական վերականգնման, սակայն, անոր խօսքով՝ Արեւմուտքի ճնշման ներքոյ Երեւանը «սառեցուց» իր մասնակցութիւնը խումբին մէջ, այնուհետեւ բոլոր եռակողմ ձեւաչափերուն մէջ:

Ըստ Զախարովայի՝ «ԱՄՆ եւ ԵՄ, որոնք փորձած են միջնորդ ըլլալ, չկրցան որեւէ բան ընել, անոնք միայն կրցան պատճենել մեր զարգացումները, միեւնոյն ժամանակ խեղաթիւրեցին անոնց էութիւնը»:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՆԵՆԻ ԱՂԲԻՐԸ ԸԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# «Իմ Համբերութեան Բաժակը Լցուած է». Փաշինեանը՝ Իրաւապահ Համակարգին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան կառավարութեան նիստին յայտնեց՝ դատական եւ ուժային կառուցներուն մէջ բարեփոխումներուն արդիւնքները չի տեսներ:

«Սա չի կարող շարունակուել, իմ համբերութեան բաժակը լցուել է», - այսօր՝ իշխանութեան վեցերորդ տարին, ըսաւ Նիկոլ Փաշինեան:

Ան այս դժգոհութիւնը չպահեց, երբ կառավարութեան հետ կը քննարկէր Ոստիկանութեան բարեփոխումներու ռազմավարութիւնն ու յառաջիկայ երկու տարիներու գործողութիւններուն ծրագիրը:

Վարչապետը կտրուկ յայտարարութիւններ ըսաւ, թէ 2018-էն ի վեր ինչ պահանջած են, կառավարութիւնը տուած է, ինչ փափաքած են՝ կատարուած է՝ իրաւապահ համակարգը բարեփոխելու համար ահռելի ներդրումներ ըրած են, որ հասարակութիւնը արդարութեան գոհ ըլլայ, յանցաւորութիւնը նուազի:

Սակայն թէ ինչու արդիւնքներ չկան, հանրութիւնը չեղափոխութիւնով իշխանութեան եկած վարչապետէն կ'ակնկալէ, երկրի ղեկավարը՝ իրաւապահ համակարգի պատասխանատուներէն. «Սրա վերջը եկել է. ես էլ բան չունեմ տալու, այն, ինչ ինձնից ուզել էք, տուել եմ: Էլ ինչն ունի մարդիկ, ովքեր հանրապետութիւնում ճշմարիտներ-վառիկներ էին անում, նոյնն անում են: Ընդդիմութիւնն ասում է՝ էս թուին սա ես ասել, իշխանութիւնից մէկը չի եկել, ասի՝ էս թուին սա ես ասել, հիմա



Վարչապետ Նիկոլ Փաշինեան

ես իրականացրել եմ դա», - արձանագրեց Նիկոլ Փաշինեան:

Մինչ այդ ներքին գործերու նախարար Վահէ Ղազարեան ռազմավարութիւնը ներկայացնելու ատեն ըսաւ, թէ անով կը նախատեսեն, որ Ոստիկանութեան կառուցուածքը աւարտական տեսքի պիտի բերեն, պիտի նորացնեն աշխատատեղերու նկարագիրը, պիտի լաւացնեն ոստիկանութեան ենթակառուցուածքները, պիտի կառավարեն փտածութեան վտանգները, ու ոստիկանութիւնն ալ գրաւիչ պիտի դառնայ:

Չնայած վարչապետի խիստ քննադատութեան, Վահէ Ղազարեան իր ղեկավարած կառուցին մասին վկայաբերեց անկախ միջազգային կազմակերպութիւններու հարցախոյզերը ու չիչեցուց, թէ հարցուածներուն 60 տոկոսը գոհ է ոստիկանութեան աշխատանքէն:

## Ի՞նչ Ուղղութեամբ Կրնան Զարգանալ

Շարունակուած էջ 1-էն

Է միջազգային քաղաքական իրադարձութիւններուն ու անոնց ելեւէջներուն: Ան նաեւ իրապարակային բազմաթիւ յայտարարութիւններով հանդէս եկած է ի նպաստ Հայաստանին:

Երկրորդ տարբերակը այն է թէ, ԱՄՆ կրնայ նուազեցնել իր ներգրաւուածութիւնը Հարաւային Կովկասէն ներս: Նման մօտեցում մը բնականաբար պիտի ամրապնդէ Մոսկուայի ու Պաքուի դիրքերը, որոնք պիտի փորձեն նոր ճնշումներ գործադրել Հայաստանի իշխանութիւններուն վրայ՝ դարձեալ իրապարակ բերելով «Չանգեզուրի միջանցքի» հարցը:

Նկատի առնուելիք պարագայ մըն է նաեւ Թուրքիոյ նախագահ Էրտողանի եւ Թրամփի միջեւ գոյութիւն ունեցող երկարամտայ սերտ յարաբերութիւնները, որոնք կրնան ազդել Հայաստանի նկատմամբ Ամերիկայի քաղաքականութեան վրայ: Էրտողան պիտի փորձէ համոզել Թրամփին, որպէսզի ան աւելի մեղմ վերաբերմունք ունենայ Ատրպէյճանի նկատմամբ:

Կայ այլ պարագայ մը եւս, որ կը մտահոգէ Հայաստանի քաղաքական շրջանակները: Նախագահ Թրամփի միշտ հետամուտ եղած է Իրանի նկատմամբ աւելի կարծր քաղաքականութիւն վարելուն, որոնց շարքին պատժամիջոցներու խստացումը եւ նոյնիսկ Իրանի

միջուկային կեդրոններուն դէմ, Իսրայէլի հետ միասին, ռազմական քայլերու դիմելը: Նման գարգացումներու պարագային Ուաշինկթըն կրնայ Հայաստանը դնել դժուար երկրներու քարտէսին, պահանջելով խզել իր տնտեսական կապերը Իրանի հետ: Դրական քայլ մըն էր վարչապետ Նիկոլ Փաշինեանի հեռաձայնային խօսակցութիւնը Տանուտ Թրամփի հետ, նախ շնորհակտելու անոր ընտրութիւնը եւ ապա տեղեկութիւններ փոխանցելու Հայաստան-ԱՄՆ յարաբերութիւններուն մէջ վերջին տարիներուն տեղի ունեցած գարգացումներուն մասին: Թրամփի մեծ կարեւորութիւն կու տայ անձնական կապերուն ու յաճախ արտաքին քաղաքականութիւն կը կառուցէ այդ կապերուն վրայ հիմնուելով:

Ժամանակը ցոյց պիտի տայ թէ նախագահ Թրամփի վարչակազմը որ ուղղութեամբ պիտի շարժի ու ինչ վարդապետութեան պիտի հետեւի՝ իր արտաքին քաղաքականութիւնը մէջ: Այսօր, Հայաստան-Միացեալ Նահանգներ երկկողմ յարաբերութիւններու պահպանումն ու առաւել զարգացումը ամենէն իրատես կարգն է Հայաստանի համար եւ կը յուսանք, որ Թրամփի հաւատարիմ կը մնայ Ամերիկայի վարած ներկայ քաղաքականութեան, որ կը բխի երկու երկիրներու շահերէն:

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ  
«ՄԱՍԻՍ»

# Ֆրանսայի Եւ Հայաստանի Բանակները Յունաստանի Մէջ Կը Մասնակցին Զօրավարժութիւններուն



Ֆրանսայի եւ Հայաստանի բանակները Յունաստանի մէջ կազմակերպուած «Ողիմպիական համագործակցութիւն-24» զօրավարժութիւններուն կը մասնակցին 7

ալ ազգերու ուժերի հետ միասին: Այս մասին X-իւր իր էջով կատարուած գրառմամբ տեղեկացուցած է ՀՀ-ի մէջ Ֆրանսայի դեսպան Օլիվիէ Տըքոնթինյի:

## Զիս Լռեցնելու Փորձերը Կ'ամրապնդեն

Շարունակուած էջ 1-էն

քարիլ Պաքուի մէջ պահուող հայ բանտարկեալներու ազատ արձակման, Հայաստանի տարածքային ամբողջականութեան պաշտպանութեան եւ հայկական հողէն ատրպէյճանական զօրքերու դուրսբերման, ինչպէս նաեւ արդար եւ կայուն խաղաղութեան համաձայնագրին համար, որ վերջապէս հանգստութիւն պիտի բերէ տարածաշրջանին», - ԱՄՆ Մերակոյտի անդամ էտ Մարքիի հետ համատեղ ասուլիսին ըսած է Փալոն:

Փալոն խնդրած է Ներկայացուցիչներու պալատի անդամներուն, որոնց թոյլ տուած են հանդիպել Ալիեւի հետ, բարձրացնել Հայաստանի դէմ Ատրպէյճանի շարունակական յարձակման հարցը:

«Ես հպարտ էի, որ երկկուսակցական պատուիրակութիւնը նախագահ Ալիեւին ըսած է, որ ԱՄՆ կառավարութիւնը՝ անկախ կուսակցական պատկանելութեան, չի ցանկար նոր հակամարտութիւններ տարածաշրջանին մէջ, եւ որ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ տարածաշրջանները կրնան լուծուիլ միայն խաղաղ միջոցներով», - ըսած է Փալոն:

Մերակոյտական էտ Մարքիին իր հերթին խոր մտահոգութիւն յայտնած է, որ Ատրպէյճանը, որ ունի հանածոյ վառելիքի արտադրութեան չափազանց մեծ կախուածութիւն եւ մարդու իրաւունքներու հետ կապուած սարսափելի իրավիճակ, ընտրուած է որպէս COP-29 համաժողովը հիւրընկալող երկիր:

«COP-29-ին մասնակցելէ յետոյ ես կրկին կը յայտնեմ, որ Ատրպէյճանի կառավարութիւնը պէտք է շտկէ մարդու իրաւունքներու խախտումները՝ ներառեալ Լեռնային Ղարաբաղի մէջ քաղաքացիական անձերու վրայ յարձակումները, ապօրինի ձերբակալութիւններն ու սպանութիւնները, խոչտանգումները, ինչպէս նաեւ խօսքի ազատութեան, հաւաքներու ազատութեան խիստ սահմանափակումները:

«Ես պիտի շարունակեմ կոչ ընել Ատրպէյճանին անյապաղ եւ

անվերապահօրէն ազատ արձակելու բոլոր հայ եւ ատրպէյճանցի քաղաքական բանտարկեալները, երաշխաւորելու հայ քաղաքացիական անձերու՝ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու իրաւունքը եւ բարեխղճօրէն բանակցելու Հայաստանի հետ խաղաղութեան համաձայնագրի կնքման շուրջ, որ պիտի պաշտպանէ տարածաշրջանային խաղաղութիւնն ու միջազգայնօրէն համաձայնեցուած սահմանները», - ըսած է էտ Մարքիին:

Կը նշուի, որ Փալոն կը մնայ Լեռնային Ղարաբաղի մէջ ցեղային զտումներու եւ այլ խախտումներու համար Ատրպէյճանը պատասխանատուութեան ենթարկելու վառ ջատագովը:

«Ալիեւի հետ հանդիպման Փալոնի մասնակցութիւնը արդիւնքը, անոր դէմ Ատրպէյճանի կառավարութեան կողմէ հովանաւորուած բողոքի հաւաքները կ'ընդգծեն Ատրպէյճանի ահող նախադրածակ ջանքերը՝ վերահսկելու պատմութիւնը եւ խուսափելու միջազգային վերահսկողութենէն:

Փալոն եւ Մարքի յոյս ունենին, որ COP-29-ը կրնար ըլլալ կառուցողական երկխօսութեան հնարաւորութիւն՝ տարածաշրջանին մէջ խաղաղութեան հասնելու համար: Սակայն Ալիեւի քաղաքականութիւնը կրկին խոչընդոտած է այդ ջանքերը՝ ընդգծելով Ատրպէյճանի նախաձեռնած մօտեցումը միջազգային համագործակցութեան նկատմամբ:

Ֆրենք Փալոն ԱՄՆ գոնկրէսական պատուիրակութեան կազմով Պաքու այցելած էր՝ մասնակցելու COP-29 համաժողովին: Ան գոնկրէսական պատուիրակութեան կազմով պէտք է հանդիպում ունենար Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ, սակայն անոր թոյլ չէին տուած մասնակցիլ հանդիպման, իսկ անոր հիւրանոցին դիմաց Ատրպէյճանի կառավարութեան կողմէ հովանաւորուող հասարակական կազմակերպութիւնները գոնկրէսականին դէմ ցոյց կատարած էին, ինչի պատճառով Փալոն ընդհատած էր իր այցը եւ վերադարձած Միացեալ Նահանգներ:

# Նոր Սերունդ Մշակութային Միութեան Գրական Երեկոն Նուիրուած Պարոյր Սեւակի Ծննդեան 100-Ամեակին

# Մեծարանք Օշին Քէշիշեանին՝ Ծննդեան 90-ամեակի Առթիւ

«Հայ Մնացեք». Օշին



Բանախօս Տոքթ. Գրիգոր Սիմոնեան

Ներկայ տարեշրջանին Նոր Սերունդ Մշակութային Միութեան տարբեր ձեռնարկներու կողքին նախաձեռնած էր գրական-գեղարուեստական հետաքրքրական յայտագիր մը: Այդ պարունակին մէջ էր գրական երեկոյ մը, նուիրուած հայ ժողովուրդի տաղանդաւոր բանաս-

Անի Մարտիկեան, ներկայացնելու բանախօս Տոքթ. Գրիգոր Սիմոնեանը: Հակիրճ կենսագրականէն տեղեակ եղանք որ ան ծնած է Պէյրութ: Իր նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է ՀԲԸՄ-ի վարժարաններուն մէջ: Երջանաւարտ է Հարաւային Գալիֆորնիոյ USC համալսարանէն որպէս ատամնաբոյժ: Դասախօս է միեւնոյն համալսարանին մէջ: Հեղինակ քանի մը տասնեակ գիտահետազոտական յօդուածներու, որոնք հրատարակուած են ամերիկեան եւ եւրոպական առաջնակարգ մասնագիտական հանդէսներու մէջ: Իր ասպարէզին գուզահեռ՝ գործօն մաս-



Հանդիսավար Անի Փինճեան

տեղծներէն Պարոյր Սեւակին, իր ծննդեան 100-ամեակին առիթով:

Վերոյիշեալ միջոցառումը տեղի ունեցաւ անցեալ Հինգշաբթի, 13 Նոյեմբեր 2024, Փասատինայի Հ.Կ.Բ.Մ.ի սրահին մէջ, որուն ներկայ էր մշակութասէր ընտրանի հասարակութիւն մը:

ՆՍՄՄ-ի վարչութեան անունով օրուան հանդիսավար Անի Փինճեան ողջունեց ներկայ հասարակութիւնը, միասնաբար նշելու հայ գրականութեան տիտաններէն տաղանդաւոր բանաստեղծ Պարոյր



Ելեմ Վարդանեան՝ ամուսն

նակցութիւն բերած է ազգային եւ մշակութային կեանքին մէջ: Երկար տարիներ վարած է ՀԲԸՄ-ի Սաթմեան Թատերախումբի վարչութեան ատենապետի պաշտօնը: Աշխատակցած է սփիւռքահայ մամուլին:

Մեծատաղանդ բանաստեղծ Պարոյր Սեւակի կեանքին ու գործունէութեան մասին հանգամանաւոր կերպով արտայայտուելով Գրիգոր Սիմոնեան յարեց «...Պարոյր Սեւակ եկաւ ճիշդ ժամանակին եւ անցաւ ժամակէն առաջ իր արուեստով ու տաղանդով: Մեծ համբաւի տիրացաւ, բայց՝ նախանձ գրգռեց եւ հալածուեցաւ:

Տասնմէկ տարեկանին կը գրէ իր առաջին ոտանաւորը: Եղած է անյազ ընթերցող մը, Չարենց, Դուրեան, Սիւսանյան, Վարուժան, Թումանեան, Տէրեան եւ Նարեկացի որոնք մեծապէս տպաւորած են զինքը:

Գրիգոր Սիմոնեան շեշտեց

Շար.ը էջ 15



ԿԱՐԻՆԷ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆ

Երջանկայիշատակ Գէորգ եւ Էօթենի Քէշիշեանների ընտանիքի երեք զաւակները դարձել են ազգի նուիրեալներ՝ ծառայելով հայութեանը, իրենց ապրած իւրաքանչիւր երկրում:

Մարաշցի էին: Նրանց ընտանիքում կային՝ անգլիքան եկեղեցու պատուելի, Իսկենդերունի հիւպատոսութեան մէջ ներկայացուցիչ, կար նաեւ վկայեալ քարոզիչ: Մարաշ-Հայկա-Երուսաղէմ, յետոյ Փարիզ, Լոնդոն տարագրութեան ճանապարհից հետոյ Գէորգն ամուսնանում է Էօթենի Աւագեանի հետ, Երուսաղէմում: 1932 թուականին ծնւում է Օննիկը, 1934 թուականին՝ Օշինը, իսկ Անգիլինն արդէն կար: Ապա ընտանիքը տեղափոխւում է Լիբանան: Այս դեռեւս վերջին հանգրուանը չէր: Ինչպէս տէր Վազգէնն ասաց մեծարման

ցութեան սկզբունքներով, իսկ արուեստագիտուհի քոյր Անգիլինն նրանց համադրումն էր՝ դարձեալ նոյն առողջ մտածելակերպով:

Կիրակի, 10 Նոյեմբեր 2024-ին, Հայաստանեաց առաքելական եկեղեցու Արեւմտեան թեմի Ս. Ղեւոնդեանց տաճարում, առաջնորդ սրբազան Յովնան արք. Տէր-տէրեանի հովանաւորութեամբ, Ս. Պատարագի ընթացքին մեծարում էին այդ ընտանիքի զաւակներից՝ 90-ամեայ Օշին Քէշիշեանին՝ հայ համայնքին եւ հայ ազգին աւելի քան եօթ տասնամեակ անմնացորդ ծառայութիւնների համար:

Տէր Վազգէն քհն. Մովսիսեանին պատիւ էր տրուել ներկայացնելու յոբելեարին: Առանց կենսագրական մանրամասնութիւնների, կեանքի հիմնական հանգրուանների մատնանշումներով, հետաքրքիր անցումներով նա վեր էր հանում Օշինի կեանքի պատմու-



հանդիսութեան ընթացքին՝ Սփիւռքի մի քանի հարիւրաւոր տարիների ջարդերից յետոյ, այս Արեւմտեան թեմը դարձաւ հայի վերջին հանգրուանը:

Հայր Գէորգը՝ «Կարաշիէն մինչեւ Աթէնք միակ դերձակ» համարուող Գէորգ Քէշիշեանը, Պէյրութից փոխադրուելով Միացեալ Նահանգներ, 1960-ականներին Հովիվոզի Սանտէթ թաղամասում գնել էր իր ընտանեկան առանձնատունը, ուր այժմ բնակուում է Օննիկի ընտանիքը:

Անգիլին, Օննիկ, Օշին Քէշիշեաններ՝ անուանի ազգայիններ, որոնց համար կեանքի ամենամեծ նպատակն է հարապատ ժողովրդի բարօրութեան սատարելը: Եղբայրներ Օննիկ եւ Օշին Քէշիշեաններն ունեն առանձնացած յատակ ուղղութիւններ՝ ողջախոհ համագործակ-

Պէտք է նշել, որ այս առիւթ հաստատուած էր 452 էջով գիրք մը պատրաստուած էր իրաքահայութեան մասին եւ անիկա բոլոր ներկաներուն նուիրուեցաւ անվճար:

Վարձքերնիդ կատար «Տոհմիկ Օր» յանձնախումբի յարգելի եւ սիրելի ատենապետուհի, անդամուհիներ եւ անդամներ, ինչպէս նաեւ ձեռնարկի բոլոր մասնակցողներ:

Armenian Council of America presents:

3rd Annual

# COMEDY NIGHT FUNDRAISER

SAT, DEC 7 21+

1060 N Allen Ave. Pasadena, CA

DOORS OPEN 8:30 PM

Michael Passion

Jack Jr.

John DiResta

Hosted by

Special guest

DJ REX

Stepan Hovagimian

ADMIT ONE

ARMENIAN COUNCIL OF AMERICA

# Գարեգին Եպսկ. Սրուանծտեանց՝ Մտատիպար Ազգահաւաքի Կղերական Յառաջապահ Գրագետը

## ՅԱԿՈՒ ՏԻՒՆԵԱՅԵԱՆ

Մեր պատմութեան մէջ գրեթէ հազուադէպ կան արձանագրութիւններ, ուր գրական, եկեղեցական կամ գիտական անուանի դէմք մը ծնած ե՛ւ մահացած է նոյն ամսուան մէջ նոյն օրը: Այդ հազուադէպ պայծառ դէմքերէն մէկն է Գարեգին Եպսկ. Սրուանծտեանց (Վան, Արեւմտահայաստան, 17 Նոյեմբեր 1840 - Կ. Պոլիս, 17 Նոյեմբեր 1892), որ ծնած եւ մահացած է 17 Նոյեմբերին, հարկաւ 52 տարուան հեռաւորութեամբ:

Արեւմտահայ գրականութեան ու աշխարհաբարի կերտիչներէն ան, եւ իբրեւ եկեղեցական գործիչ՝ աչքառու կերպով, իրիմեան Հայրիկի հաւատարիմ աշակերտներէն եւ ամենասերտ գործակիցներէն մին:

Մեր գաւառական գրականութեան զարգացման մէջ յատկանշական, նշանակալից եղաւ դերը Գարեգին Եպսկ. Սրուանծտեանցի, որուն հատորները, լոյսի բարիքին եկած երկերը իրենց ոգեշունչ տարածքը ունին մասնաւորապէս Պոլիսը եւ որոշ չափով ալ անոր բարբառը, նաեւ Արեւմտահայաստանի քաղաքները, որով եկեղեցական այս աննկուն ու անխոնջ գործիչին գլխաւոր նպատակն է եղած ստոյգ կորուստէ փրկել մեր տոհմային ամէն արուեստագիտական արտայայտութիւն: Խրիմեան Հայրիկով հիմը դրուելով ու շարունակուելով Գարեգին Եպսկ. Սրուանծտեանցով, յետագային թլկատիւնցի, Ռուբէն Զարդարեան, Արտաշէս Յարութիւնեան, Բենիամին Նուրիկեան, Համաստեղ Վահէ Հայկ եւ ուրիշներ զարգացուցին մեր գաւառական գրականութիւնը:

Իր բազմաթիւ ճամբորդութիւններու ընթացքին եւ հայրենի հողին վրայ յայտնաբերուած, բուսած մեր հեքիաթներուն, մասնաւոր արտայայտչաձեւերուն, աւանդութիւններուն, բարբերուն, աղօթքներուն եւ անէծքներուն, նախապաշարունակներուն հաւաքագրումն ու պահպանումը կը խօսին Հայ քրիստոնեայ մարդուն հոգեկան այն անձանձիր տուրքէն, որ եղաւ Գարեգին Եպսկ. Սրուանծտեանցինը:

Սրբազանը գիտէ՛ր եւ ատակ էր զգացումի ջերմութիւն, հարազատ հնչող մտածողութիւն ու ազնուական երանգ մտցնել իր հաւաքած հայ ժողովրդական դիւցազներգութեան յայտնաբերման ու բոլոր հում նիւթերուն մէջ, անոնց տալով տոհմիկ գնացք ու հայրենական սլացք՝ այնպիսի խիզախութեամբ ու վարպետութեամբ, որ կարող են վկայել իր թարմաշունչ գրեթէ բոլոր երկերը, որոնք թէեւ գուրկ են յօրինումի, ստեղծագործական յղացքէ, սակայն ունին այն տաք տոհմիկ հայկական շունչը, խորունկ հայրենասիրութիւնը, խոնարհ հոգեւորականի նկարագիրը, կենսաբախ ու ազնիւ հոգին, հայու անսեթեւեթ ցաւերն ու անշարք կսկիծները, որոնք պայծման են վարակիչ դարձնելու անոր գրածները հայ ընթերցողին մէջ:

Իսկ իրիմեան Հայրիկի հաւատարիմ աշակերտը ըլլալու փառստը: Դեռ 17 տարեկան պատանի եւ իրիմեան Հայրիկի բացած վարագայ վանքի «Ժառանգաւորաց» վարժարանի աշակերտ՝ Գարեգին Սրուանծտեանց նախ կը սկսի իր



եռանդուն աշխատակցութիւնը բերել «Արծուի Վասպուրականի» հանդէսին, որուն մէջ յաջորդաբար ան լոյս կ'ընծայէ «Բուրաստան Բարոյական Առաքիլութեանց» (1858), «Ինչ Որ Յանես Զայն Կը Հնձես» (1859), «Շիրիմք Նախնեաց», «Տեսարանք Հայրենի Աշխարհաց», «Հայրենասիրութիւն եւ Հայրենիք» հայրենադաստիարակչական յօդուածները, որոնք կը վերաբերին Հայրենիքին եւ անոր ապագային:

1862-ին կը պայթի Ջէյթունի ապստամբութիւնը եւ հայ զանուաճները ոտքի կ'ելլեն պաշտպանելու իրենց ազատութիւնը, մարդկային արժանապատուութիւնը: Սրուանծտեանց, լա՛ւ գիտէ, որ հայ երիտասարդութիւնը պէտք է ըլլայ հայ ժողովուրդի ազատագրութեան պայքարի հիմնասիւնը: Ան կը յորդորէ, կը պատգամէ, կոչ կ'ընէ ըսելով. «Միանամք մեք եղբարք, գորութիւն ի միութիւն եւ յաղթութիւն ի գորութիւն»:

Նոյն տարին, 22-ամեայ Սրուանծտեանցի խմբագրութեամբ Տարօնի մէջ կը սկսի լոյս տեսնել «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը, որուն առաջին թիւի խմբագրականին մէջ ան կը գրէ. «Ո՛հ, դու ծնար, դեռ Հայաստան ի ցաւս կը հեծէ»: Երիտասարդ խմբագիրը այս խօսքերով իբրեւ օրակարգ կը բարձրացնէ հայրենասիրութեան բարբառն ու ազատութեան շունչը: Դժբախտաբար թերթը քաղաքական մատնութեամբ կարճ միջոց մը փակուելէ յետոյ կը վերաբացուի Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանին միջնորդութեամբ:

1867-ին Սրուանծտեանց ընդունելով կուսակրօնութիւնը կ'օժուրի վարդապետ: Հիմա առանց արգելքի ան կը շրջագայի ժողովուրդին մէջ: Մերթ կ'ուղղուի Վան՝ բոցաշունչ քարոզներ սփռելով ու ոգեգինելով ժողովուրդը, մերթ կ'երթայ Կարին՝ իբրեւ քաղաքային դպրոցի տեսուչ եւ հայոց պատմութեան ուսուցիչ, մերթ ալ Մուշ՝ տեղի Ս. Կարապետ վանքի վանահօր փոխանորդ իբրեւ, ամէնուրեք անհաշտ պայքար տանելով յետադիմական խաւերու եւ հարստահարիչներու դէմ, մանաւանդ «Մանգոմէի էֆֆեար»ի էջերուն մէջ, չխնայելով մինչեւ իսկ Մշոյ մեծլիսի անդամ պետական պաշտօնեաները: Օրինակ, յիշեալ հանդէսին մէջ «Մշեցւոց Վրայ Ընդհանուր Տեսութիւն Մը» խորագրաւ յօդուածաշարքով եւ գրուած իրիմեան Հայրիկի անմիջական պատուէրով, Սրուանծտեանց մանրակրկիտ թուարկումներով կը մերկաց-

նէ Տարօնի հայութեան կրած հարստահարութեանց համարեա բոլոր դէպքերը, կեղեքուած ժողովուրդին անլուր տառապանքները, անարգանքի սիւնին գամելով խաւարամիտ ու թուլամորթ եկեղեցական ներկայացուցիչները:

Նշանակալից ժամանակներ էին 1869-1873 երկարող տարիները: 1869-ին Մկրտիչ Խրիմեան՝ իրիմե-

ան Հայրիկ կ'ընտրուի Կ. Պոլսոյ պատրիարք: Անոր հայեացքները կ'ուղղուին գաւառէն քաղաք՝ Վան, արեւմտահայութեան ցաւերը դարմանելու նպատակով, իսկ իր հաւատարիմ աշակերտը՝ Գարեգին Սրուանծտեանց, մնալով գաւառ, մտնելով բոլոր մութ խորշերը, կը

Շար.ը էջ 15

### Section 8 Waiting List Opening

Van Nuys will be accepting applications for our Studio, 1 and 2-bedroom Section 8 rental apartments. Van Nuys is available to households that include a member who is 62 years or older or is a person with a disability of any age. Van Nuys Apartments consists of 132 Studio, 157 One Bedroom and 10 Two Bedroom apartments.

Applications will be accepted from December 17, 2024 at 10am to January 24, 2025 at 5pm. An electronic lottery will be held after the application period closes to establish the waiting list order.

Incomplete applications or applications submitted after the deadline will not be accepted. Household members can only appear on one application. If an application contains household members that are on other applications for this listing, all of them will be disqualified. Any fraudulent statements will cause application to be removed from the waiting list.

Rents for this affordable housing program are based on total gross household income. Applicants must be income eligible and meet occupancy guidelines. Households must earn no more than the maximum income levels noted below:

#### 50% HUD Median Income Limits

Household Size	1 Person	2 Persons	3 Persons	4 Persons
Max Annual Income	\$48,550	\$55,450	\$62,400	\$69,350

Note: Applications will be available in person at the Van Nuys Apartments Leasing Office located at: 210 W. 7<sup>th</sup> Street, Los Angeles, CA 90014, by mail or email if requested at (213) 627-5286 or by visiting our website at: [www.LiveatVanNuys.com](http://www.LiveatVanNuys.com)

Applications will be accepted in person, and via first class mail at Van Nuys Apartments Leasing Office, 210 W. 7<sup>th</sup> Street, Los Angeles, CA 90014, faxed to (213) 627-5068 or emailed to [VanNuysApts@related.com](mailto:VanNuysApts@related.com). Applications may also be submitted online at: [www.LiveatVanNuys.com](http://www.LiveatVanNuys.com). Mailed applications must be received or post marked on January 24, 2025. Applications received after this date and time will not be accepted.

Application information and our resident selection criteria is available in person at the Van Nuys Apartments Leasing Office located at 210 W. 7<sup>th</sup> Street, Los Angeles, CA 90014 and at [www.LiveatVanNuys.com](http://www.LiveatVanNuys.com). You may begin submitting applications starting December 17, 2024 at 10am. The open application period will end on January 24, 2025 at 5pm. Please contact Related Management for building info at (213) 627-5286 or email us at [VanNuysApts@related.com](mailto:VanNuysApts@related.com).

If you need help filling out an online application, please contact our Community Manager at (213) 627-5286 or [VanNuysApts@related.com](mailto:VanNuysApts@related.com). TTY (800) 735-2929.

#### Tenomos disponible asistencia de idiomas. PH: (213) 627-5068

Applicants may request a reasonable accommodation if one is needed to assist in completing an application by calling 213-627-5286 or by emailing [VanNuysApts@related.com](mailto:VanNuysApts@related.com).

Income limits are subject to change based on changes to the Area Median Income as published by HUD, and the California Tax Credit Allocation Committee.



TTY: 800-735-2929

# «Դէնքս Կիւինկ»ի (Thanksgiving) Օրուան Առթիւ «Գոհաբանութեան Օր»ը Ինչ կը Պատագամէ Մեզի

ՅԱԿՈՒ ՏԵՐԵԱՆ

«Դէնքս Կիւինկ»ը Ամերիկեան տօներուն մէջ մեծ շուքով եւ ընտանեկան մթնոլորտի մէջ տօնուող տօներէն մէկն է, որ կը տօնուի ամէն տարի Նոյեմբեր ամսուն 4րդ Հինգշաբթի օրը: «Դէնքս Կիւինկ»ի խորհրդանշական իմաստը, պարզ լինելով մըն է մարդոց, որ չմոռնան իրենց ուրախ ժամերուն ու կերուիտներուն առընթեր, փառք տալու նաեւ Հօր Աստուծոյն եւ շնորհակալութիւն յայտնելու այն բոլոր բարիքներուն եւ շնորհքներուն համար, որոնք կը վայելեն իրենց ամէնօրեայ կեանքին մէջ:

«Դէնքս Կիւինկ»ը կարգ մը այլ տօներու կարգին, կարելի է կոչել «ընտանեկան տօն»: Այդ օրը ընդհանրապէս ընտանիքի բոլոր անդամներ, հեռու թէ մօտ եղող քոյրեր ու եղբարներ, ու հարազատներ, անոնք որ ամուսնացած են իրենց ընտանիքներով, մնացեալները առանձին, կ'աշխատին մէկտեղուել մէկ երդիքի տակ, որը ընդհանրապէս կը կատարուի ընտանիքի երիցագոյն անդամին տան մէջ, միասնաբար տօնելու «Դէնքս Կիւինկ»ը, միասնաբար փառք տալու Աստուծոյ ու միասնաբար ճաշակելու պատրաստուած համեղ կերակուրները, որոնց գլխաւորն է անպայման աւանդական դարձած՝ կարմրցուած հնդկահաւը:

Քրիստափոր Բոլոմպոսի Ամերիկեան գտնելէն (1492) մօտ 129 տարի ետք (1621), Անգլիոյ մէջ ծայր տուած կրօնական հալածանքներէն փաղտոյ մարդիկ, առաջին անգամ ոտք կը դնեն Ամերիկայի Մէսսչուսէթ նահանգին ցամաքամասին վրայ: Սկզբնական շրջանին թէեւ ուրախ էին իրենց ազատութիւնը առած ըլլալու սրտի հոգունակութեամբ, սակայն այս նոր երկրին կլիման, իր խստաշունչ ձմեռը ու կենցաղային դժուարին պայմանները, որոշ նեղութիւններու մատնած էին գիրենք:

Այդպէս կ'անցնին 2 տարիներ: Մարդիկ ալ ընտելացած էին իրենց այս նոր միջավայրին ու ապրելակերպին: Թէեւ իրենց կեանքը որոշ չափով մտած էր բնական հիւնի մէջ, բայց տակաւին չէին մոռցած իրենց առաջին օրերու նեղութիւնները, երբ ոտք դրին այս նոր ցամաքամասին վրայ:

Այդ օրերու կառավարիչ Ուիլիամ Պրիտտի տեսնելով այս գաղթական մարդ ցուրտը, կ'ուզէ իրենց Ամերիկա մոտքը լիջատակող տօնական օր մը որոշել: Եւ ասա երկու տարի անց, 1623-ին Յուլիս ամսուն 30-ը կը հռչակէ պաշտօնական տօնական օր իրենց համար: Կառավարիչին այս որոշումը մեծ խանդավառութիւն յառաջ կը բերէ իրենց մէջ եւ այդ օրը անհուն հրճուանքի, ուրախութեան եւ փառաբանութեան օր մը կ'ըլլայ իրենց համար:

Իրենց դրացի տեղացի հնդիկներն ալ այդ օրը իրենց համար կը բերեն ու կը նուիրեն իրենց որսացած հնդկահաւերէն, մասնակից դառնալով իրենց ուրախութեան:

Այդ օրը գրեթէ բոլոր այդ գաղթականներուն ընտանիքներուն մէջ, պատրաստուած տեսակաւոր կերակուրներուն մէջ բացառիկ տեսք մը կ'ունենայ կարմրցուած հնդկահաւը:

Մարդիկ ուրախ ու գուլարթ ճաշակելով այդ հնդկահաւերը, մե-

ծապէս շնորհակալութիւն կը յայտնեն Աստուծոյ, իր տուած բոլոր տեսակի յաջողութիւններուն եւ բարիքներուն համար: Այդ օրուրէն սկսեալ Thanksgiving-ը հնդկահաւ ուտելու սովորութիւնն է որ կը շարունակուի մինչեւ այսօր:

Երբ Ամերիկեան իր անկախութիւնը կը ստանայ 1777-ին հանրապետութեան առաջին նախագահ ձորճ Ուաշինկթըն 1789ին շնորհակալութիւն յայտնելու Գոհաբանութեան այդ օրը կը տեղափոխէ Նոյեմբեր 26-ին, զայն կոչելով «Երախտագիտութեան Օր»: Ատկէ ետք «Երախտագիտութեան Օր»ը թէեւ կը տօնուի կարգ մը այլ նահանգներու մէջ եւս, սակայն պաշտօնական ազգային տօն մը չէր տակաւին, մինչեւ Աբրահամ Լինքոլնի նախագահութեան շրջանը, երբ մեծանուն նախագահը Նոյեմբերի 26-ը կը փոխէ Նոյեմբերի վերջին Հինգշաբթի օրուն 1863-ին: Ատկէ ետք է որ բովանդակ Ամերիկայի տարածքին «Դէնքս Կիւինկ»ը կը տօնուի պաշտօնապէս բոլոր նահանգներուն մէջ, որպէս ազգային ու կրօնական տօն:

Իսկ 1939-ին նախագահ Ֆրէնքլին Ռուզվելթ թուականի փոքր տեղափոխութեամբ մը Նոյեմբերի վերջին Հինգշաբթին կը փոխէ Նոյեմբերի չորրորդ Հինգշաբթի օրուն: Վերջնական այս որոշումը քննկրէսը կը վաւերացնէ:

«Դէնքս Կիւինկ»ը Ամերիկացի ժողովուրդին սիրելի տօնն է, չըսելու ամենասիրելին, որ կը տօնուի գրեթէ բոլոր հարուստ թէ աղքատ ընտանիքներուն մէջ որպէս, կրօնական եւ ազգային տօն: Այդ օրը ուրախութեան եւ կերուիտովի օր է իրենց համար:

Նստած ճոխ սեղաններու շուրջ, երբ կը ճաշակեն աւանդական դարձած համեղ հնդկահաւերը, լիջելով անցեալը թէ ինչպէս առաջին եկող գաղթականները տեղացի հնդիկներուն նուիրած հնդկահաւերով տօնեցին իրենց առաջին «Դէնքս Կիւինկ»ը չմոռնալով միեւնոյն ատեն փառք տալու եւ շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ, իրենց շնորհած ազատութեան համար, դժբախտութիւն է այսօր չըսելու համար ապերախութիւն, որ «Դէնքս Կիւինկ»ի օրը հակառակ իր կրօնական տօն մը ըլլալուն, մարդիկ կը սիրեն պահել անոր ուտել-խմելու եւ ուրախանալու բաժինը միայն, անտեսելով անոր շնորհակալութիւն յայտնելու եւ երախտագիտութիւն ցուցաբերելու անհրաժեշտ գիտակցումը:

Յաւ ի սիրտ, այս է այսօր մարդկութեան ընտրութիւնը: Հեռու կրօնական հաւատալիքներէն եւ հաւատքէն, այլ միայն կերուիտով եւ ուրախութիւն:

Ինչ կը պատգամէ մեզի «Դէնքս Կիւինկ»ը (Thanksgiving)ը

Thanksgiving-ը Ամերիկեան տօն մըն է, սակայն ամերիկահայեր եւս անմասն չեն մնար զայն տօնելէ, նոյն ոգեւորութեամբ:

Ան սիրելի տօն մըն է բոլորին համար: Այդ իսկ պատճառով Ամերիկահայեր ոչ միայն իւրացուցած են զայն, այլ մինչեւ իսկ հայացուցած են՝ զինք անուանելով «Գոհաբանութեան Օր», որը կարելի է «Դէնքս Կիւինկ»-էն աւելի որակեալ անուն նկատել այս տօնին համար:

«Դէնքս Կիւինկ»ը բառացիօրէն կը նշանակէ շնորհակալութիւն յայտնել: Ինչպէս գիտենք, շնորհա-

կալութիւն յայտնելը քաղաքավարական փոխ հատուցում մըն է մեզի տրուած որեւէ նուէրի կամ հրաւէրի եւ կամ որեւէ օգնութեան դիմաց:

Այո, թէեւ շնորհակալութիւն կը յայտնենք մեզի տրուած որեւէ բանի մը համար, սակայն հարց է, թէ կը գոհանանք արդեօք մեզի տրուած այդ նուէրով, թէ... անբաւարար եւ ոչ գոհացուցիչ կը գտնենք զայն:

Հետեւեալ պատմութիւնը լաւ օրինակ մըն է բացատրելու մեր միտք բանին:

Թագաւոր մը իր պարտէզին մէջ մեծ սեղան կը պատրաստէ ժողովուրդին համար: Ամէն տեսակ կերակուրներ, խմիչքներ, պտուղներ, անուշեղէններ, սուրճ եւ այլն: Ամէն բան շատ առատ: Ու կը հրաւիրէ ժողովուրդը որ գան ուտեն ու խմեն եւ վայելեն ու մեկնին:

Մարդիկ խուռներամ կու գան կ'ուտեն ու կը խմեն մինչեւ յագեանա:

Մեկնումի պահուն ալ իւրաքանչիւրին կու տան նաեւ փոքրիկ գաւաթ մը լեցուն ոսկի: Մարդիկ այդ ոսկիներն ալ առնելով կը մեկնին:

Ապա թագաւորը իր մարդիկը կ'ուղարկէ ժողովուրդին մէջ, իմանալու է մարդիկ ինչպէս կ'արտայայտուին այդ հիւրասիրութեան մասին:

Ձեկուցաբերներ լսելէ ետք մարդոց արտայայտութիւնները, կու գան ու կը յայտնեն թագաւորին ըսելով. Տէր արքայ, մարդիկ բոլորն ալ շնորհակալութիւն կը յայտնեն ձեզի, ձեր տուած այդ մեծ կոչունքին համար, սակայն նոյն ատեն կը փափաքէին... որ այդ ոսկիի գաւաթները քիչ մը աւելի մեծ ըլլային...:

Այս պատմութեան մէջ կը տեսնենք «Դէնքս Կիւինկ»ը եւ «Գոհաբանութեան Օր»ի տարբերութիւնը: Առաջինին մէջ, մարդիկ միայն շնորհակալութիւն կը յայտնեն թագաւորին այդ մեծ կոչունքին համար: Իսկ երկրորդը ցոյց կու տայ որ մարդիկ տակաւին լուր գոհացած չեն այդ կոչունքէն... Տակաւին դժգոհելիք կէտ մը ունին, գաւաթները շատ փոքր էին...:

Մարդիկ, որոնք գոհացում չունին իրենց կեանքին մէջ ու չեն գիտեր բաւարարուիլ իրենց ունեցածովը, որքան ալ ունենան, դարձեալ դժգոհելու կէտեր ունին միշտ: Մինչեւ իսկ թագաւորին ճոխ սեղանին կերուիտով վայելքն ապրելէ ետքն իսկ, դժգոհելու կէտ մը կը գտնեն: Սակայն, պահ մը եթէ մենք ալ փորձենք մեր հայեացքները դարձնել մեր անձերուն վրայ եւ տեսնել թէ արդեօք մենք ալ նման չենք այդ դժգոհութիւն յայտնող մարդոց, որոնք կրնան թագաւորական բարիքներէն ետքն անգամ դժգոհանք ունենալ:

Միթէ մենք ալ ճաշակելով հանդերձ Աստուծոյ մեզի շնորհած մեր ամէնօրեայ հացը, (զհաց մեր հանապգորդ սուր մեզ այսօր) վայելելով հանդերձ Աստուծոյ մեզի շնորհած բոլոր բարիքներն ու շնորհքները, որոնք կը վայելենք մեր կեանքին մէջ, ամէն օր, ամէն ժամ եւ ամէն վայրկեան: Միթէ դարձեալ չենք ինչպիսի դժգոհանք յայտնելու այդ նոյն փորձութեան մէջ, չենք դժգոհիլ երբ նեղութեան մէջ մատնուինք, երբ ձախորդութիւն մը ունենանք եւ կամ մեր ակնկալած յաջողութեանը հասնինք:

Ասոնք մեզ փորձաքարի զարնող պատահարներ են կեանքի մէջ,

որոնք կու գան չափել մեր դիմադրողական կարողութիւնը այդ փորձութիւններուն մէջ:

Սակայն, մարդիկ ինչ վիճակի ու պայմաններու մէջ որ ապրած ըլլան, աղքատ թէ հարուստ դարձեալ իրենց յատուկ դժգոհանքի պատճառներ կ'ունենան:

Գործաւոր մը կը դժգոհի իր աշխատավարձէն, որ դժուար կը բաւարարէ իր ծախսերը:

Վաճառականը կը դժգոհի իր ապրանքին ուշացումէն՝ կրած վնասին համար:

Համեստ ընտանիքի հայր մը կը դժգոհի որ մարդիկ տարին մէկերկու շաբաթ արձակուրդի կե'րթան, մինչ ինք տարիներէ ի վեր գրկուած է այդ վայելքէն: Հարուստ մարդը կը դժգոհի թէ հարիւր հարաւոր տոլարներ կապած է «Սթաք»ներու որոնք շաւարդիկը չեն տուած եւ այլն:

Ու այսպէս բոլոր մարդիկ հարուստ թէ աղքատ իւրաքանչիւրը իր կեանքի պայմաններուն մէջ դժգոհելու կէտեր կ'ունենան:

Պատճառն այն է որ մարդիկ ինչ վիճակի մէջ որ գտնուած ըլլան, միշտ իրենք գիրենք կը բաղդատեն իրենցմէ վեր եղող մարդոց հետ: Եւ բնական է որ այդ չափորոշութեան մէջ ինքզինքնին վատ տեսնելով կը դժգոհին:

Հետեւեալ պատմութիւնն ալ ինքնին խօսուն է բոլորին համար:

Երիտասարդ մը տեսնելով որ իր կօշիկին տակը ծակած է եւ ջուր կը մտնէ անկէ, եպիսկոպոսին քով կ'երթայ եւր դժգոհութիւնը կը յայտնէ ըսելով, որ ոչ նոր կօշիկ մը գնելու ի վիճակի է եւ ոչ ծակ կօշիկը նորոգելու տալու:

Եպիսկոպոսը զինք կը տանի մօտակայ գիւղ մը եւ ցոյց կու տայ հոն ապրող մարդոց կեանքը, որոնք բոլորն ալ բոպիկ կը քալեն... անոր համար որ բնաւ կօշիկ չունէին...:

Երիտասարդը տեսնելով այդ բոլորը կը հասկնայ որ ինք փոխանակ դժգոհելու, աւելի ուրախ պէտք է ըլլայ որ ինք թէեւ ծակ՝ սակայն ի վերջոյ կօշիկ ունի... բոպիկ չէ...:

Ճիշտ է որ կեանքի պայմանները բոլոր մարդոց համար նոյնը չեն:

Աշխարհի սկիզբէն ի վեր չէ եղած շրջան մը, որ բոլոր մարդիկ ապրած ըլլան նոյն հաւասարութեամբ:

Միշտ եղած են դասակարգային տարբերութիւններ, հարուստներ ու աղքատներ, ճոխ եւ համեստ ապրողները:

Թէեւ այս առակը գրուած է ծակ կօշիկով աղքատ երիտասարդին վրայով, սակայն դժգոհանքը միայն աղքատներուն բաժինը չէ: Ինչպէս տեսանք, կրնան դժգոհիլ եւ վաճառականը եւ մեծահարուստներ, որոնք տիրապետելով հանդերձ մեծ հարստութիւններու, կը դժգոհին երբ իրենց շահերը արդիւնաւէտ չըլլան:

Սակայն իւրաքանչիւր անձ, հարուստ թէ աղքատ կարգավիճակին մէջ, «կօշիկ»ի այս առակէն լաւ դաս մը կրնայ քաղել իրեն համար, միշտ բոպիկ քալողները լիջելով:

Եւ ասա ճիշդ այս է «Գոհաբանութեան Օր»ուան մեզի տուած պատգամը:

Գոհանալ մեր ապրանք կեանքով: Չդժգոհիլ մեր չունեցածներուն համար, այլ գոհանալ մեր ունեցածներով: Փառք տալ Աստուծոյ ու գոհաբանութիւն մատուցանել իրեն, երախտագէտի հոգիով ու խոնարհութեամբ:

Այս ընթացքը մեզի խաղաղ կեանք կ'ապահովէ:

### Նոր Սերունդ Մշակութային Միութիւն

Շարունակուած էջ 6-էն

բանաստեղծի յանդուգն անհատականութիւնը իր գրած չորս բանաստեղծութիւններուն մէջ, որոնք լոյս տեսած էին «Սովետական Գրականութիւն» ամսագրին մէջ եւ նկատուած «անհանդուրժելի» Ստալինեան բռնապետութեան հայ գործակալներուն համար: Դժուար տարիներ էին...:

Այնուհետեւ Պարոյր Սեւակ Մոսկուա երթալով կ'ուսանի Կորֆի անուան գրական հաստատութեան (ինստիտուտ) մէջ:

Սեւակ իմաստասէր բանաստեղծը կը սկսի կազմաւորուել «Որդուս» հոյակապ բանաստեղծութեամբ:

Յարգելի բանախօսը՝ մէկ առ մէկ յիշեց Պարոյր Սեւակի հրատարակութիւնները «Անհաշտ Մտերմութիւն», «Միտոյ ճանապարհ», «Նորից Քեզ հետ»: Արդարեւ, Պարոյր Սեւակ առաջինը եղաւ որ Ապրիլեան եղեռնը գեղարուեստական գրականութեան բերաւ եւ քերթողութեան վերածեց գրելով «Անլուրի Ձանգականտուն»:

Սեւակի յաջորդ գիրքը «Մար-

դը Ափի Մէջ» նոր էջ մը բացաւ հայ գրականութեան մէջ: Սեւակ անցաւ հայրենասիրական համամարդկայինին («Եռաձայն Պատարագ») եւ այլն:

Տոբթ.Գրիգոր Սիմոնեան իր սոյն բովանդակալից ու խիստ շահեկան գեղոյցն աւարտեց ըսելով «...այնքան ատեն որ կը գոչատեւէ հայ ազգն ու մշակոյթը Սեւակի ձայնը՝ Սեւակի խօսքը պիտի սաւառնի ու խանդավառէ սերունդները»:

Սոյն ձեռնարկի ընթացքին գեղարուեստական յայտագրով ելոյթներ ունեցան շնորհալի կատարողներ՝ Ելեն Վարդանեան ամուսնք «Ալունելի Ձանգակազունը» եւ Արթըր Քէօրօլեան դաշնամուր (Շոփէն «Նոգթիւր Արամ Խաչատուրեան (Սուրբուր Պար)»:

Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ ներկաները առիթն ունեցան շնորհաւորելու ելոյթ ունեցողները:

Գողտրիկ ձեռնարկ մըն էր արդարեւ, որուն համար կ'արժէ շնորհաւորել ՆՍՄՄ-ի նորակազմ վարչութիւնը:

Գ.Մ.

### Մեծարանք Օշին Քէշիշեանին

Շարունակուած էջ 6-էն

կում որպէս բժիշկ՝ աշխատելով Մադիզանի գլխավոր հիւանդանոցում: Նա ավարտել էր Լոս Անջելեսի Cal State-ը եւ Լա Վերնի համալսարանը, մասնագիտանալով մարդաբանութիւն - ամերիկեան հետազոտութիւններ եւ խորհրդատուութիւն ճիւղերում: Օշին Քէշիշեանը Պէյրոսթում, Լիբանան, «Ջարթօնք» մարզական շաբաթաթերթի հիմնադիր խմբագիրն էր: Եղել է Գլենդէլի համալսարանի քոլեջի «El Vaquero» թերթի խմբագիր: 1968 - 1970 թուականներին եղել է «Նոր Օր» հայկական կիսաշաբաթաթերթի խմբագիրը:

1970-ից հրատարակել իր սեփական թերթը՝ «The Armenian Observer»-ը, որ 50 տարիներ անգլերէնով ներկայացրել է մեր պատմութիւնը սփիւռքահայութեան:

Քէշիշեանի յօդուածները տպագրուել են բազմաթիւ թերթերում, նա մասնակցել է հայկական մշակոյթին ու քաղաքակրթութեանը նուիրուած մի շարք միջազգային գիտաժողովներին:

Կլենտէյլի Համալսարանի քոլեջում պաշտօնավարել է 1985 թուականին:

Նա դասաւանդել է հայ գրականութիւն եւ քաղաքակրթութիւն Լա Վերնի համալսարանում եւ այլ հաստատութիւններում՝ որպէս հեռակազմ դասախօս:

Օշինը Թէքէեան Մշակութային Միութեան Կենտրոնական վարչութեան երկար տարիների անդամ էր, նաեւ՝ անցեալի Արշակ Տիգրանեան դպրոցի հոգաբարձութեան խորհրդի անդամ:

Տէր Վազգէն քահանան նշեց Օշին Քէշիշեանի մի քանի կարեւոր իրագործումները. մասնակցութիւնը Մոնթեպելլոյում կառուցուած Հայոց Յեղասպանութեան յուշարձանի տեղադրման աշխատանքներին եւ բացման արարողութեանը՝ Վազգէն Ա.-ի ներկայութեամբ եւ օրհնութեամբ,

իր յարաբերութիւնները եւ մտերմութիւնը իրերայաջորդ հայոց պատրիարքների հետ, ազգային բարերարներ Ալեք Մանուկեանի եւ Քըրք Քըրքորեանի հետ, Ու. Սարոյեանի աճիւնների փոխադրութիւնը հայրենիք, որ Հայաստանից ստացուած առաջադրանքով վստահուած էր Օշինին, իր հանդիպումները Ամերիկայի երեք նախագահների հետ, Մոսկուա կատարած այցելութիւնները: Եւ այս բոլորը՝ սառը պատերազմի ժամանակ: Ինչպիսի ճկունութիւն պէտք է ունենար նա կատարելու այս աշխատանքները՝ առանց խաթարելու դիւանագիտական յարաբերութիւնները:

Տէր Վազգէնն ասում է. «1960-ականներուն Հոլիվուդի մէջ քիչ էինք, սակայն հայ մնացինք Օշինի շնորհիւ»:

Հանդիսութիւնը եզրափակում էր Յովնան սրբազանը. «1984-ին երիտասարդ վարդապետ էինք, դուք կրակի պէս ամէն տեղ, ձեր բոցաշունչ խօսքերով, ելոյթներով կ'ոգեւորէիք հայութիւնը: Դուք ձեր մէջ կը կրէք մեր պատմութիւնը, որ պէտք է գիտնայ երիտասարդ սերունդը: Կը խոնարհինք բոլորով, օրհնուած էք: 2027 թուականին, այս թեմի 100-ամեակին առիթով տեղադրուող նուիրեալներու յուշակոթողին վրայ առաջինը ձեր անունը պիտի ըլլայ՝ Օշին Քէշիշեան, Սուրբ քաղաքի ծնունդ, ներշնչուած Ս. Էջմիածինով, որ ձեր կեանքով դարձաք պսակը մեր ժողովուրդին»:

Պատարագի աւարտից յետոյ հիւրերը հրաւիրուած էին հիւրասիրութեան եկեղեցու Գալայճեան սրահում:

Վստահ ենք, եթէ Օշին Քէշիշեանն ունենար իր անցեալի կորովը, մենք կը ստանայինք աւելի շատ տեղեկութիւններ իր կեանքի եւ գործունէութեան մասին: Ուրեմն, ներկայացուած վաւերագրութիւնն է, որն արդէն դարձել է պատմութիւն: Յու-

### Գարեգին Եպսկ. Սրուանձտեան

Շարունակուած էջ 13-էն

շարունակէ յորդորել ժողովուրդը, պայքարի աւելն ներարկել հայոց մէջ՝ անպատիժ մնացած կղերին ու հարստահարիչին դէմ:

1871-ի վերջերուն Սրուանձտեանց կը նշանակուի Ազգային Սահմանադրութեան գործադրիչ՝ այնպիսի ժամանակներուն, երբ Վանի մէջ սկսած էր եռեւեփիլ հայ կեանքը ու հայը յայտնուիլ ներքին նոր խմորումներու, մարտահրաւէրներու առջեւ: Սահմանադրութեան գործադրումէն բացի Սրուանձտեանց ունէր այլ գործեր ալ կատարելու, հրահանգներ պատրիարքէն՝ զանոնք ի կատար ածելու մինչեւ վերջ, որոնցմէ գլխաւորներն էին՝ քարոզել ժողովուրդին յառաջդիմութեան համար, խօսիլ աղէտներու դարմանման մասին՝ ամուր սէրով միաւորելու ազգին գաւակները, երիտասարդութեան մէջ վառել կրակը հայրենասիրութեան եւ զօրացնել ուսման տենչը անոնց մէջ:

Դժբախտաբար, 1873-ին Խրիմեան Հայրիկ պատրիարքական Աթոռէն հրաժարելէ ետք Սրուանձտեանցի ազգային գործունէութեան խանդը եւս կը նուազի եւ ան կ'անցնի Պոլիս, ուր կը ծաւալէ գրական գործունէութիւն: Քանի մը տարի ետք վրայ կը հասնին ուռու-թրքական պատերազմը, ապա Պերլինի խորհրդաժողովը, հայ քաղաքական պատրանքներ..., եւ այս բոլորին մէջ Սրուանձտեանց խոր ցաւով կ'արձանագրէ ազգիս անմիաբանութեան խնդիրներուն կապուած բազմաթիւ իրողութիւններ Վանի եւ շրջակայ գաւառներու կեանքէն:

1874-ին լոյս կը տեսնէ աւանդութիւններ ու հեթիաթ-գրոյցներ ներկայացնող եւ քառասուն գլուխներէ իր անդրանի երկը՝ «Գրոց ու Քրոց»-ը, որուն մաս կը կազմէ «ՄՏերի Դուռ»-ը կամ «Սասունցի Դաւիթ»՝ դիւցազնավէպը, որ յայտնաբերողը եղած է Գարեգին Եպսկ. Սրուանձտեանց: Գրագէտ սրբազանը կը յայտնէ, թէ «Սասունցի Դաւիթ»-ը առաջին անգամ ինք գրի առած է 1873-ին, գիւղացի կրպոյցի բերնէն, Մշոյ դաշտի Առնիստ գիւղին մէջ: Նոյն տարին՝ 1874-ին, կը հրատարակուի գրաբարով գրուած իր «Հնոց եւ Նորոց»-ը, որ կը ներկայացնէ Մովսէս Խորենացիի եւ Դաւիթ Անյաղթ իմաստասէրի Յունաստանի մէջ աշակերտութիւնը, ինչպէս նաեւ աւարտական քննութեան ձեւերն ու Հայաստան վերադարձը: Բացի Սրուանձտեանցի յառաջաբան ու վերջաբան խօսքերէն, այստեղ կան նաեւ Մշոյ Ս. Կարապետ վանքին ձեռագիր մատենաներուն ցանկը:

1876-ին լոյս կը տեսնէ քանի մը բաժիններէ բաղկացած «Մանանա» երկը, որ կը ներկայացնէ Վանայ Այգեատանը իր անթարշաձ գեղեցկութիւններով: Ան կու տայ տեսութիւն մը ժողովրդական վէպերու եւ գրոյցներու մասին, ապա ինն հեթիաթներ Վանի բարբառով:

սանք, կը գտնուեն երիտասարդ ուսումնասիրողներ, ովքեր Օշինի ունեցած փաստաթղթերի, նրա աշխատած վայրերի, հայկական միութիւնների արձանագրութիւնների միջոցով վեր կը հանեն

Գիրքին Բ. մասին մէջ հեղինակը հաւաքած է ժողովրդական երգեր, ինչպէս՝ «Միտոս Նման է էն Փլած Տներ», «Լուսնակն Անոյշ, Հոգն Անոյշ», եւ այլն: Այս շարքին մէջ կան նաեւ հարսանեկան երգեր, հարս ու կեսրոջ տաղեր, առածներ եւ առակներ ու գաւառական բառերու ցանկ մը: Սրուանձտեանց կ'ըսէ, թէ իր սոյն գործը բազմատեսակ նիւթերու շտեմարան մըն է, իր բնութագրումով՝ «բանասիրաց եւ գրասիրաց համար պատրաստուած նիւթ»:

Ուղեւորութեան մը առիթով գրի առած տպաւորութիւններու ժողովածոյ մըն է «Համով Հոտով»-ը, լոյս տեսած 1884-ին: Այս հատորին մէջ կան զանազան բարբառներով հեթիաթներ, գրոյցներ: Գիրքը նուիրուած է Հայաստանի տեղավայրերուն, պատմական յուշարձաններուն, հայոց պատմիչներուն եւ մշակոյթի բնագաւառներու գործիչներուն: Հատորին մաս կը կազմեն «Սիամանթօ եւ Խջեգարէ» քրտական-ժողովրդական աւանդավէպը, Ակնայ ժողովրդական երգեր, գեղջկական երգեր, հարսանեկան պարերգներ, եւ այլն:

Վերջապէս երկհատոր «Թորոս Աղբար»-ը (1879-ին եւ 1884-ին), որուն մէջ Սրուանձտեանց կ'արծարծէ հայերու գաղթական իրավիճակին, գիւղատնտեսութեան, արդիւնաբերութեան մասին մանրամասն տեղեկութիւններ, ոչ թէ գիտական մօտեցումով, այլ՝ բանաստեղծի ներշնչանքով: Իր ուղեւորութիւնը՝ Սամսոնի դէպի Ամասիա, Սվազ եւ Խարբերդ: Երկրորդ հատորը հինգ տարի ետք իր կատարած նոր ճամբորդութեան նկարագրութիւնն է: Այստեղ գրագէտ սրբազանը կու տայ շահեկան տեղեկութիւններ Տրապիզոնի, Երզնկայի, Խարբերդի, Չմշկածագի, Քեմախի, Բալուի, Արգնի, Ակնայ եւ Տիգրանակերտի մասին:

Պիտի ընդգծել, որ Սրուանձտեանցի ոգին աւելի՛ տիրական էր քան Խրիմեանիները, որուն բարոյախօսութիւնները յաճախ կը գառածին հակալիւթ դուրս: Սրուանձտեանցէն ետք մենք ունեցանք կղերական գրական դէմքեր, ինչպէս՝ Դուրեան արքեպիսկոպոսը, Թորոս Գուշակեանը, Մաղաքիա Օրմանեանը, Բաբգէն Կիւլէսէրեանը եւ ուրիշներ, սակայն Գարեգին Եպսկ. Սրուանձտեանցի մէջ ազգային ջիղէ վաւերական գրագէտը կը մնայ գերիվեր ու գատորոշելի, որուն գործերը՝ գերծ ձանձրացուցիչ եւ վանողական ու ճապաղ քարոզներէ, պիտի շարունակեն մեզ յուզավառել իրենց յորդութեամբ, վարակիչ ջերմութեամբ, հրաբորբ հմայքով բոլոր՝ ժամանակներու մէջ: Ան իբրեւ բանասէր-բանահաւաք, ազգագրագէտ, ազգային-հասարակական, մշակութային եւ կրթական էր պայծառադէմ գործիչ, կը հանդիսանայ մտատիրպար ազգահաւաքի՝ 19-րդ դարու մեր հայ եկեղեցական կեանքին մէջ:

«Աղթամար»-«Մաղիկ»

### Ազգերու Լիկա. Զայաստանի Զաւաքականը Պարտութեան Մատնեց Լատվիացիներուն



Ֆուտպոլի Ազգերու Լիկայի 6-րդ եւ վերջին հանգրուանին Հայաստանի հաւաքականը գլխաւոր մարզիչի ժամանակաւոր պաշտօնակատար Սուրէն Չախալեանի ղեկավարութեամբ հիւրընկալեց Լատվիայի խումբին եւ յաղթեց 2:1 արդիւնքով:

Ազգերու Լիկայի 5-րդ հանգրուանին Հայաստանի հաւաքականը ընդունեց Ֆարերեան կղզիներու խումբը եւ պարտութիւն կրեց 0:1 արդիւնքով:

Չորրորդ խումբին մէջ Հայաստանի կազմը 7 կէտով գրաւեց երկրորդ տեղը եւ անցումային հանդիպում պիտի կատարէ Ե բաժանմունքի ուղեգրին համար:

Խմբակի առաջատար դարձաւ Հիւսիսային Մակեդոնիայի խումբը, որ վերջին հանգրուանին 1:0 արդիւնքով յաղթեց Ֆարերեան կղզիներու հաւաքականին եւ վաստակեցաւ 16 կէտ:

Շ լիկայի 4 խմբակին մէջ երկրորդ տեղը գրիող խումբերը փլեյ-օֆֆին մրցին Ե լիկայի 4 խումբերուն մէջ երրորդ տեղերը գրաւող խումբերուն հետ:

Փլեյ-օֆֆի վիճակահանութիւնը տեղի կ'ունենայ Նոյեմբերի 22-ին, իսկ հանդիպումները՝ 2025-ի Մարտին:

### Իտալիոյ Զաւաքականը Պարտութեան Ֆրանսացիներէն

Ազգերու Լիկայի 6-րդ հանգրուանին իտալիոյ հաւաքականը ընդունեց Ֆրանսայի խումբին եւ պարտութիւն կրեց 1:3 արդիւնքով:

Ա լիկայի երկրորդ խումբի մէջ միւս խաղին Իսրայէլի հաւաքականը նուազագոյն արդիւնքով յաղթեց Պելճիքայի խումբին:

Ֆրանսան ու իտալիան վաստակեցան 13-ական կէտ եւ հասան քառորդ եզրափակիչ:

### Անգլիան Ու Նորվեկիան Յաղթեցին 5:0 Արդիւնքով

Ֆուտպոլի Ազգերու Լիկայի մրցումներուն գծով Նոյեմբեր 17-ին կայացան 6-րդ հանգրուանի հանդիպումները: Ե լիկայի երկրորդ խումբին մէջ Անգլիոյ հաւաքականը 5:0 արդիւնքով յաղթեց Իռլանտայի խումբին եւ 15 կէտով երկրորդ խումբի առաջատարն է: Անգլիացիները կը վերադառնան Ա լիկա:

Երրորդ խումբին մէջ Նորվեկիայի հաւաքականը 5:0 արդիւնքով պարտութեան մատնեց ղազախներուն եւ նոյնպէս գրաւեց առաջին տեղը՝ նուաճելով Ա լիկայի ուղեգիր:

### Ռոնալտու. Փորթուկալի Զաւաքականէն Կը Զեռանամ Անսպասելի Կերպով

Փորթուկալի հաւաքականի եւ Սէնտական Արաբիոյ «Ալ Նասրի» 39-ամեայ յարձակող Կրիշտիանու Ռոնալտուն տակաւին չէ որոշած, թէ երբ պիտի աւարտէ իր ազգային խումբէն խաղալու պահը:



«Հաւաքականէն կը հեռանամ անսպասելի, բայց մտածուած որոշումով: Ոչ մէկ նախնական յայտարարութիւն պիտի չըլլայ», - Ռոնալտուի խօսքը կը մէջբերէ AS-ը: Ռոնալտուն ֆորթուկալի հաւաքականէն կը խաղայ 2003 թուականէն ի վեր՝ 215 խաղերու ընթացքին նշանակելով 135 կոլ, կատարելով 45 կոլային փոխանցում: 2016-ին ան ազգային խումբին հետ դարձած էր Եւրոպայի ախոյեան:

### ԱԱ. Ուրուկուէյը Յաղթեց Գոլոնպիային Եւ Բարձրացաւ Երկրորդ Տեղ

Աշխարհի առաջնութեան հարաւամերիկեան գօտիի ընտրական մրցաշարի 11-րդ հանգրուանին Ուրուկուէյի հաւաքականը ընդունեց Գոլոնպիայի խումբին եւ առաւելութեան հասաւ 3:2 արդիւնքով:

Ուրուկուէյ 19 կէտով բարձրացաւ երկրորդ տեղը: Գոլոնպիան նոյնքան կէտով երրորդն է:

### Արժանթին Սեսիի Զետ Պարտութեան, Պրագիլը Զաւասար

Աշխարհի առաջնութեան հարաւամերիկեան գօտիի ընտրական մրցաշարի 11-րդ հանգրուանին աշխարհի ախոյեան եւ Ամերիկայի գաւթակիր Արժանթինի հաւաքականը հիւրընկալեց Բարակոուայի խումբին եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:



Արժանթինցիներուն միակ կոլը նշանակեց Իտալիոյի ախոյեան Միլանի «Ինթերի» յարձակող Լաուտարո Մարտինսը: Արժանթինի հիմնական կազմին մէջ էր եւ ամբողջ հանդիպումին մասնակցեցաւ ամերիկեան «Ինթեր Մայամի» 37-ամեայ յարձակող Լիոնել Մեսին, որ արդիւնաւէտ գործողութիւններով չփայլեցաւ:

Արժանթին 22 կէտով առաջատարն է, Բարակուէյը 16 կէտով 5-րդն է: Պրագիլի հաւաքականը մրցակիցի դաշտին վրայ 1:1 արդիւնքով հաւասարեցաւ Վենեզուելայի հետ:

Պրագիլցիներու կոլը նշանակեց Լա Լիկայի առաջատար «Պարսելոնայի» յարձակող Ռաֆինէան:

Մատրիտի «Ռեալի» յարձակող Վինիսիուս Ժունիորը 1:1 արդիւնքի ժամանակ չկարողացաւ նշանակել 11-մեթրանոց հարուածը:

Պրագիլը 17 կէտով երրորդն տեղը կը գրաւէ ընդհանուր դասաւորման մէջ:

### Աշխարհի Առաջնութեան Նախընտրական Փուլ Պասքեթպոլի Զայաստանի Զաւաքականի Կազմը



Պասքեթպոլի տղոց Հայաստանի հաւաքականի մարզչական յանձնախումբը հրապարակած է կազմը, որ կը պատրաստուի Նոյեմբերի 24-ին Երեւանի մէջ կատարուելիք աշխարհի առաջնութեան նախընտրական փուլի Հայաստան-Աւստրիա հանդիպումին:

Հայաստանի հաւաքական հրաւիրուած խաղացողներն են՝ Անտրէ Սպայթ Մկրտչեան, Դանիէլ Կիրակոսեան, Դանիէլ Գէորգեան, Տիգրան Մկրտումեան, Ալեքսէյ Չիժենոկ, Եուրա Մելիքեան, Քրիս Զոնս, Ճէք Տաւտեան, Գաբրիէլ Աճեմեան, Արտիոմ Թաւաքալեան, Ալբերտ Թաղեւոսեան, Արկաղի Մկրտիչեան, Քրիստիան Վիտալ, Արայիկ Գէորգեան, Կարէն Մելիքեան:

Երկրատես ընդմիջումէ յետոյ հաւաքական կը վերադառնայ Արտիոմ Թաւաքալեանը: Փորձառու պասքեթպոլիստը ազգային խումբին մէջ հանդէս եկած է 2016-2017 թուականներուն: Առաջին անգամ ազգային հաւաքականի կազմէն պաշտօնական խաղին կարող է մասնակցել Դանիէլ Գէորգեանը, որը վերջին տարիներուն արդիւնաւէտ խաղ կը ցուցադրէ Երեւանի «Ուրարտուի» կազմէն ներս:

Ազգային հաւաքականի նորեկներէն է նաեւ Դանիէլ Կիրակոսեանը: 19-ամեայ Կիրակոսեանը ամրան ընդգրկուած էր Հայաստանի մինչեւ 20 տարեկաններու հաւաքականի կազմին մէջ եւ արդիւնաւէտ խաղ ցուցադրած՝ երիտասարդական հաւաքականի ստուգողական հանդիպումներու ընթացքին:

Ազգային հաւաքականի պաշտօնական խաղերուն իր նորամուտը կարող է նշել նաեւ Հայաստանի մինչեւ 16 եւ 18 տարեկաններու հաւաքականի նախկին խաղացող Ալեքսէյ Չիժենոկը, որ ներկայիս հանդէս կու գայ Ռուսաստանի Սուպերլիկայի մէջ:

Առաջին անգամ Հայաստանի հաւաքական հրաւիրուած է իտալական «Թորտոնա» ակումբի ամերիկացի խաղացող Քրիստիան Վիտալը: Վերջինս այս տարի ստացած է ՀՀ քաղաքացիութիւն եւ կարող է ներկայացնել Հայաստանի հաւաքականը, սակայն Վիտալը եւ հաւաքականի առաջատար պասքեթպոլիստ Քրիս Զոնսը ըստ ՖԻՊԱ-ի կանոնադրութեան անոնցմէ միայն մէկը կրնայ գտնուել յայտացուցակին վրայ, նկատի ունենալով որ անոնք Հայաստանի քաղաքացի դարձած խաղացողներ են:

Գէորգի Ղազանչեանի գլխաւորութեամբ Հայաստանի հաւաքականը Նոյեմբերի 15-էն կը սկսի ուսումնամարզական հաւաքը, որը կը կայանայ «Օլիմպական»ի մէջ: